№ 6 (172) XVI ՏԱՐԻ ՅՈՒՆԻՍ 1906

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

ԾԻՐԱՆԱԿԻՐ ԽՐՏՈՒԻԼԱԿԸ

Ճառերը հոսում են հեղեղի նման. ծրագիրները բազմատեսակ ու բազմաթիւ. հռետորների թիւը անվերջ: Ամենակարող՝ խօսքով, անկար՝ գործով:

Պետական դուման է այդ:

Գրգռուած ցարի ներկայացուցիչների ամբարտաւան յամառութեամբ, վիրաւորուած՝ իրենց աշխարհի անզօրութեան փաստով, խղճահար այն անվերջ ցաւերի դիմաց, որոնց միջից ծնեց ինքը դուման, յեղափոխական երկունքի այդ անդրանիկ, բայց կիսակազմ մանկիկը, պատգամաւորները շարունակում են փրփրել, բորբոքուիլ, շարունակում են խօսել աւելի խիստ շեշտով, աւելի թունդ ոճով...

Ծաղր և նախատինք մինիստրների երեսին, որոնք մի-մի անգամ՝ ինչպէս երկչոտ նապաստակներ՝ ցոյց են տալիս իրենց գլուխները կառավարչական աննախանձ օթեակում. բուռն յանդիմանութիւն թուլակամ և չափաւոր ընկերների հասցէին. գերագոյն յափշտակութեան հասած ներբողներ ազատութեան գործին. անվերջ, անծայր յոյսեր գիւղացիութեան, բանւորութեան, բոլոր տանջածներին, և ի լրումն՝ պատանեկան յոյզով կրկնուող ծափեր ու բացականչութիւններ, նոյնքան առատ, որքան ժողովրդի ցաւը, նոյնքան բուռն, որքան պատգամաւորների իղձերը...

Սիրում ենք հաւատալ նրանց բարեմտութեանը, միակ արդարացումը՝ անզօր դումայի, որին, ով գիտէ, գուցէ, այլ բան չէ վիճակված, բայց եթէ խօսել, բողոքի կոչեր արձակել, լսելի դարձնել ցարերի երկրից վաղուց հալածական եղած տարրական ճշմարտութիւնները, և գէթ մի քանի ամիս՝ հրապարակով, Տաւրիկեան պալատի „օրինական" շինութեան մէջ՝ ներբող կարդալ ազատութեան մարտիկներին, սովատանջ աշխատաւորութեան, արգելուած բառերին ու շղթայակապ ազատութեան: Սակայն մի էական պայմանով միայն — տեսնել ամբողջ ճշմարտութիւնը, մերկացնել ռեժիմը իր ամբողջ կազմով, և առանց դիւանագիտական որևէ վերապահութեան՝ մատը դնել այն բոլոր անձերի ու պատճառների վրայ, որոնք աղբիւր են մեր ընդհանուր դժբախտութեան, այսքան վշտի ու արեան, համառուսական անծայր տանջանքների...

Եւ այդ է, որ պակասում է:

Ցանցագործներին մատնանիշ անող ձեռքը, ցաւ է ասել, չէ բարձրանում ամբողջ ոյժով, պատգամաւորական գիտակից մի ժողովին պատիւ բերող համարձակութեամբ: Հարուածը թերի է, յետախուզութիւնը չ'աւարտած: Նշանակէտը մնում է միշտ նոյնը — Գօրեմիկին, ճկուն և աներես մի ծառայ. Տրեպօվ, ստեղծագործ մի ոճրագործ, քանի մի մանկլաւիկներ պալատական շրջանից, և մի խումբ արկածախնդիրներ՝ վարչական աշխարհում...

Բայց նա, որ սրբագործումն է ամբողջ բռնապետութեան, թագն ու պսակը բոլոր չարիքների, և այն պալատը, ուր ապաստան է գտել ոճիրի բովանդակ ռազմախումբը, դրուած մեծ իշխանների և իշխանուհիների հովանու ներքոյ, տէր և հրամայող բոլոր մանրունքների,—մնում է խնայուած, անխոթելի, ազատ յարձակումներից, անմատչելի արդար քննադատութեան, շրջապատուած „վեհապետի անձեռնմխելիութեան" քնաքեր ու դատարկ բանաձևով...

Վեհապետը,—մի խրտուիլակ, գլխին թագ ու մէջքին ծիրանի, այլասեռուած մտքով ու մարմնով, վախկոտ՝ ինչպէս նապաստակ, փոփոխամիտ՝ որպէս հողմահար, փառասէր՝ իր ոչնչութեան մէջ, յանդուգն՝ ճառեր կարդալիս, լալկան՝ գործի ժամանակ:

Պալատը,—սրբագործուած ապաստանը թափթփուկ տոհմի, որ չէ ստեղծագործում, այլ ապականում է, մեծագոյն աւազականոցը ամբողջ կայսրութեան, փըրկութեան խարիսխը բոլոր նրանց, որոնք յղփանում են՝ առանց աշխատելու, գողանում են՝ առանց պատժի, հրամայում են՝ առանց գլխի և սրտի. հնոցը ապականութեան, մահարձանը՝ ազատութեան:

Մեծ իշխաններ,—մեծ՝ տիտղոսով, պստիկ՝ արժէքով, չարագործութեան մէջ ընդունակ՝ ինչպէս Վլադիմիր, գործառնութեան մէջ անկար՝ ինչպէս Նիկոլայ, ձրիակեր՝ պետական գանձարանում, դաւաճան՝ ազատութեան գործի մէջ. զեղխարար ու շւայտ, մարդակեր ու արիւնածարաւ...

Եւ այդ ամբողջ մրուրն ու չարիքը՝ ազատ յարձակումներից, խնայուած դումայական մերկացնող ճառերի մէջ, դուրս՝ „հասարակ մահկանացուների" քննական հայեացքից, որպէս զի այդ ճառերին ականջ դնող ամբոխը շարունակի մրափել այն սպանիչ մոլորութեան

մէջ, թէ „ցարը՝ աստուածային փոխանորդ է“, նրա „պալատը՝ տաճարների տաճար“, ու „շրջապատողները՝ աստուածութեան սպասաւորներ“—դարևոր խաբեբայութիւն, որ մայրն է մեր տանջանքի, մեր քաղաքական յաշմանդամութեան, ծնողը՝ ժողովրդական այսքա՜ն ոճիրների...

„Քաղաքական փափկանկատութեան թելադրութիւնն է այդ“—ասում են զգուշաւորները՝ դումայում և դումայից դուրս։ Անօգուտ, աննպատակ, անմիտ փափկանկատութիւն, որ ոչ բռնաւորների սիրտը պիտի մեղմացնէ և ոչ էլ դիմադրական պահանջների աջողութեան պիտի նպաստէ։ Փաստերը հրապարակի վրայ են։—Ամենիստեան մերժուեց։ Մինիստրութիւնը հրաժարական չէ տալիս։ Մահեան պատիժը կանգուն է։ Հողային ծրագիրը ոտնահարուած։ Եւ ճիշտ այն միջոցին, երբ դումայի կուլուարների մէջ ուղերձներ են պատրաստւում յանուն ցարի—ժողովրդի հօր, բանտերը լքցւում են նոր կալանաւորներով, կախաղանները տասնապատկւում են, կառավարչական խուլիգանութիւնը նորից սրում է ժանիքները, արիւնը յորձանք է տալիս, Լօձին յաջորդում է Վարշավան, Կիշինեօվին՝ Բելօստօկ, Նախիջևանին՝ Վարանդա...

Էրնէկ մենք սխալւած լինէինք։ Էրնէկ թէ անդրանիկ դումայի դիւանագիտական զգուշաւորութիւնը, այդ ակամայ յարգանքն ու լռութիւնը ծիրանակիր խրտիլակի և նրա վոհմակի դիմաց՝ կանգնեցնէր արեան հոսանքը, սահման դնէր այս չը տեսնւած կրակին, որ մաղւում է ահագին պետութեան վրայ, ինչպէս համաժողովրդական պատիժ։ Սակայն, աւա՜ղ, սխալը յեղափոխական անվերապահ մտածողութեան մէջ չէ, այլ հակառակ կողմը...

Եւ գուցէ երբէք և ոչ մի ժամանակ վերապահութեան պոլիտիկը այնքան կորստաբեր չէր կարող լինել, ինչպէս այժմ, երբ ամբողջ երկիրը, բորբոքւած յեղափոխական տրամադրութեամբ, ուզում է վերջնականապէս ճանաչել ամբողջ չարիքը և բոլոր չարագործներին, երբ անհրաժեշտօրէն հարկաւոր է վճռական ու անվրէպ հարուածով կտրել այն թոկերը, որոնք կապում են տանջւած ժողովուրդները տանջող արքունիքների հետ, և պատգամաւորական ժողովի մատը ուղղել դէպի այն գլուխը, որ բոլոր ոճիրների գլուխն է և որի վրայ պիտի ընկնի պատասխանատուութիւնների ծանրագոյն մասը։

Խնայելը՝ խաբել կը նշանակէ։

Ամբողջ տոհմը Բօմանօվների, այլասերւած և անբարոյական, ամենաբարձրագիր ներկայացուցիչը այդ տան՝ մի ծիրանակիր խրտիլակ, որ մի ձեռքով տալիս է, երկու ձեռքով յետ խլում—արժանի չեն յարգանքի, խնայման, վերապահութեան։ Նրանք երբէք չեն իմացել յարգանքին յարգանքով պատասխանել, ասպետութեան՝ ասպետութեամբ։ Քանի հարիւր տարի է արդէն՝ ջուր ուզողին լեղի տւեցին, հաց ուզողին՝ քար։ Ուղերձներին՝ մտրակով պատասխանեցին, որդիական աղերսներին՝ սուիններով։ Ժողովրդական աշխատանքով կառուցւած պալատը դարձրին մեծագոյն աւազականոց, ամբողջ երկիրը՝ համատարած բանտ...

Դարձեալ պէ՞տք է խնայել։

Ոչ և հազար անգամ ոչ։ Խնայման քաղաքականութիւնը չի փրկի կացութիւնը, չի ազատի սրտատրոփ դումման բռնապետութեան հարուածներից։ Այսօր դումայի մի ձայնաւորի վռնդումն է պահանջւում—և դա փաստ է արդէն,—վաղը կը պահանջի ամբողջ խմբերինը—և նշանները երևում են,—միւս օրը կը հնչէ վերջին երգը—լուծման բարձրագոյն հրամանը, վերջին գործողութիւնը պալատական դաւադրութեան։

Սուիններով կը պատեն համառուսական անդրանիկ բողոքարանը, և կը հրամայեն „անձեռնմխելի“ պատգամաւորներին 24 ժամում իրենց տները դառնալ։

—„Ի՞նչ ասացիք Պետերբուրգում“—պիտի հարցնեն ընտրողները, անհամբեր և սրտաբեկ։

—Ամբողջ ճշմարտութիւնը...

Լոկ պատւի խնդիր չէ այդ, այլ ցաւատանջ ժողովրդների անխօս, լռակեաց, բայց սրբազան կտակը, աւանդւած իր ընտրեալներին ոչ թէ մեռած քէնեռով ու թղթով, այլ աղի արտասուքով ու արեամբ...

Ցեղեցէք այդ, դուք ամենամեծ և ամենադժբախտ երկրի անդրանիկ պատգամաւորներ, թափ տւէք ձեզանից փոշին վերապահութեան և գերագանց մի յափշտակութեամբ՝ ուղղեցէք ձեր մատը դէպի մեծագոյն պատասխանատուն, դէպի ոճրագործութեան գլխաւոր ապարանքը։ Ցոյց տւէք 150 միլիոն ժողովրդին այն խրտիլակը, որ ծիրանի է կրում, և այն եղեռնը՝ որ գահին է յենւած։ Ասացէք ամբողջ ճշմարտութիւնը։

Ցեղափոխութեան պահանջն է այդ։

„ԴՐՕՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՈՒՂԱՐԿԻԱԾ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻՆ)

—

ԹԻՖԼԻՍ, յունիսի 10

Երևանը նորից հայ-թրքական ընդհարումների բեմ դարձաւ։ Դէպքը տեղի ունեցաւ յունիսի 9-ին, քաղաքի հրապարակում։ Առիթը, ըստ երևոյթին մի աննշան դէպք էր—կռիւ երկու թուրքերի մէջ։ Կռիւը անմիջապէս կերպարանափոխւեց ընդհանուր հրացանաձգութեան և իրարանցման։ Հայերը բոլորովին չէին սպասում և այդ պատճառով շատ զոհեր տւեցին։ Հայերից սպանւած են 29, թուրքերից 4։ Սպանւած են նոյնպէս 2 վրացի, 2 մօլոկան և 1 հրէայ։ Վիրաւորների թիւը 20-ից աւելի է։ Ոստիկանութիւնը, ինչպէս միշտ, անգործ է և երկդիմի։ Հսկողութիւն է նշանակւած մի քանի տների վրայ։ Երևանի դէպքի պատճառով՝ շրջականերում նկատւում է յուզմունք։ Սուրմալուի գաւառը հանգիստ չէ։

—

ԹԻՖԼԻՍ, յունիսի 14

Կառավարական խուլիգանութիւնը բարձրացնում է իր գլուխը։ Թիֆլիսում դէպքերը սուր կերպարանք են ստանում։ Ոստիկանութիւնը եռանդով նպաստում է քաղաքի անապահովութեան և անվերջ սպանութիւններին։ Գործադուլի նշանները զօրեղանում են։ Իուզարկութիւնները այնքան շատացել են, որ ոստիկանական պաշտօնեաները այլ գործով զբաղուելու ֆիզիքական հնար չ'ունին։ Ընդհանուր համոզումն է, որ անհրաժեշտ է հիմնական փոփոխութիւն՝ ամբողջ վարչութեան մէջ, խաղաղութիւն վերահաստատելու համար։ Փոխարքայի թուլութիւնը վրդովիչ է։ Պաշտօնեաները դարձել են անսանձ իրենց ապօրինութիւնների մէջ։

—

ԹԻՖԼԻՍ, յունիսի 18

Թիւրքաց Հայաստանից տխուր լուրեր են հասնում։ Էրզրումի թիւրքերի շարժման վրէժը սուլթանը հայերից է ուզում առնել։ Քաղաքի հայ բնակչութիւնը անհանգիստ վիճակի մէջ է։ Աւելի ծանր է վիճակը Մուշի շրջանում։ Տուրքերի առիթով սկսած խստութիւնները Վանի վիլայէթում՝ հասել են չ'եղած չափերի։ Կենդրօնից հրահանգ է ուղարկւած Վանի փաշային անխնայ լինել դէպի հայերը։ Վասպուրականից գաղթող հայերի թիւը օրէցօր շատանում է։

ԴԷՊԻ ԳՈՐԾ

Ներկայ կրակոս յօդուածը, գրւած „Դրօշակի" համար, մի նոր արտայայտութիւն է այն շեշտած համակրութեան, որ գերմանուհի տաղանդաւոր գրողը՝ Տիկին Ֆրայան՝ թէ կօնֆերանսներով եւ թէ գրչով յանախ ցոյց է տւել հայկական դատին, եւ որի երկու գրքոյկները՝ „Հայկական հարցը" եւ „Հայերն ու ցարիզմը" այդ դատի ջերմ պաշտպանութիւնն են գերմանական հասարակութեան առաջ։

—

Այս պահուս, երբ ռուս կառավարութիւնը—այդ ճիրանազէն գարշելի կաղնաբեկը, որ վայրագօրէն մարդկային գլուխներ կը ջարդէ՝ անոնց ուղեղները ճզմելու—ամբողջ աշխարհէն խայտառակ մահւան դատապարտւած՝ կը պատրաստւի կորսւելու, նոյն պահուն այդ օրհասական հրեշը, որուն ոճրալից գոյութիւնը պէտք էր կործանւէր ռուսական Բաստիլի—Շլիսէլբուրգի անկումով, դեռ ոյժ ունի Կովկասի մէջ նոր վայրագութիւն ստեղծելու, վերադարձ մը 1905-ի արիւնոտ օրերուն։

Կեդրոնի մէջ տկարացած, ճակատագրական և ստորերկրեայ ոյժերը կը ջանան բուն դնել լայնածաւալ կայսրութեան այլ մասերուն մէջ՝ հազարաւոր անմեղներ մահացնելով։ Սակայն հայերը բաւական խրատւած են։ Անոնք վաղուց ծանօթ են ռուս կառավարութեան եղեռնական դիտաւորութիւններուն, ինչպէս և անոր, որը գերագոյն հեգնութեամբ մը հրապարակեցաւ ինքզինք տիեզերական խաղաղութեան օգոստափառ առաքեալը անուանելու։ Ի՜նչ եպերելի կատակ։ Նոյն կեղծաւոր առաքեալը չէ՞ր միթէ, որ 1903-ին մահացու հարւածը տւաւ հայ եկեղեցիին—դժբախտ ժողովրդի պատմական սրբավայրին, որ քրիստոնէական գաղափարի առաջին մարտիրոսները տւած էր աշխարհին։ Նիկոլա Բօմանովն է այդ, որ իր մեծ-հաւատաքննիչ Պօբէդոնէսցեվէն առաջնորդւած՝ տւաւ հարւած մը, որ չէր փորձած Նոյնիսկ Աբդիւլ-Համիդը։

Չը կար սիրտ մը, որ չը զգացւէր։ Անլուր հարւածը վշտացուց թէ՝ ազատամտածողները, թէ՝ հաւատացողները, թէ՝ գիտունները և թէ՝ տգէտները. ամենահարուստները, ինչպէս և աղքատները։

Եւ հակահարւածը չ'ուշացաւ երևան գալ։ Եթէ Նիկոլա կ'ուզէր հայերը յեղափոխական դարձնել՝ վերջը յեղափոխականութեան մէջ մեղադրելու նպատակով,—իր գործիքը լաւ էր ընտրած։ Ապստամբ սրտերը՝ իրենց արդար բարկութեան մէջ՝ անվախօրէն կ'արտայայտւէին։ Բռնապետներուն դուր եկող գերեզմանական խուլ լռութիւնը՝ հոգ ընդհատեցաւ անզուսպ աղաղակներով։ Եւ ահաւասիկ վայրկեանը հասած կը նկատւէր, նմանելու սահմանէն անդին գտնւող Մեծ-Մարդասպանին, նորագոյն ժամանակներու այդ ամենագարշելի սրաբածին։

„Խաղաղութեան առաքեալը" ցեղերու և ազգերու ներքին կռւի նշանը տւաւ, նորահնար միջոցը՝ ամբողջ պատասխանատւութենէ ազատւելու համար։ Բայց ասիկա աւելի դժւար էր Կովկասի մէջ քան Թիւրքիա։ Բագւի, Բալախանիի ու Բաթումի նաւթային խոշոր արդիւնաբերութեան զարգացման հետ միասին՝ սոցիալիստական գաղափարներ ալ մուտք էին գործած և կը սպառնային, մարդկային հաւասարութեան նոր աւետարանով, միացնել հայ և թուրք բանւորները։ Մարդկային հաւասարութի՜ւն, — սարսափելի նշանախօս բռնապետութեան համար։

Քրիստոնեայ և մահմեդական բանւոր ու բանւորուհիներուն գործադուլը, կազմակերպւած 1902-ին, մինչև այն ատեն աննախընթաց համերաշխութեան օրինակը տւաւ աշխարհին։ Հանդէս չ'նկաւ ոչ մի գաւառաճան, ոչ մի խանգարիչ։ Եւ այդ՝ սոցիալիզմի ձեռակերտն էր Կովկասի մէջ, խաղաղութեան հրաշալի պատկերը, ապագայի տեսիլքը, որ հայ բանաստեղծները երազեր էին այնքան յափշտակութեամբ։

Սակայն, ափսո՜ս, ահա 1905-ը՝ „մեգալի" միւս երեսով։ Թուրքերը, երէկւան ընկերները, կը նետւին իրենց քրիստոնեայ բարեկամներուն վրայ, կը սպանեն, կ'այրեն և կը կողոպտեն. կիներու և երեխաներու վրայ ի գործ կը դնեն այն ամեն նրբացած վայրագութիւնները, որոնք կը կրէին դրօշմը հայկական մեծ կոտորածի, որ Թիւրքիայի անունը ընդմիշտ նշաւակեց։ Ահա անըմբռնելի մի փոփոխութիւն։ Ահա Նիկոլա II-ի և իր արբանեակներու գործը, թշւառականի գործ, որ իր փլէզող գահը դժբախտ հպատակներու արիւնով կ'ուզէ ամրացնել։

Ո՜վ դու, Նիկոլա Բօմանով, ստախօս գահակալ, դու որ ջլատւած անդամներուդ ոյժ տալու համար արեան մէջ կը լողաս՝ ինչպէս առաւօտեան ցօղի մէջ, մենք քեզ կը մեղադրենք մարդկութեան դատարանի առջև։ Դու քեզ ինքնակալ կ'անւանես, բայց աւելի թշւառական ես քան վերջին ստրուկը։ Դու քեզ ժողովուրդներու հովիւը կը յորջորջես, բայց գայլ ես՝ հօտը յօշոտող։ Սպասաւորներուդ անունն է՝ ատելութիւն և ջարդ։ Հազարաւոր դժբախտ հպատակներուդ արևը մարեցիր. զանոնք օդէն և կեանքէն զրկեցիր. անոնց շրթունքներուն վրայ խօսքերը պաղեցուցիր, ինչպէս

մտքերը՝ անոնց ուղեղին մէջ։ Եւ Կովկասի մէջ՝ ստեղծեցիր հայերու և քրիստոնեաներու ստոր և անարգ թշնամի մը—Ֆանատիկոս Թուրքը։ Որպիսի դժբախտ կռիւ հայերու համար՝ բռնակալութեան ապուշ գործիք դարձած այս տարրի դէմ։ Հայ երիտասարդութիւնը փոխանակ նետուելու մտքերու անհուն տարածութեան մէջ և փոխանակ ստեղծագործելու, բռնադատուած կը տեսնէ զինքը՝ զէնք վերցնել իր ընտանիքի և հայրենակիցներու գոյութիւնը պաշտպանելու։

Դու, գահակալ Օսմանով, որ հայ երիտասարդութիւնը անբան և տգէտ Թուրքերու ատիճանին իջեցնել և կամ՝ այս անարգ կռիւով բոլորովին ոչնչացնել ուզեցիր, դու մեղադրուած ես և դատապարտուած։ Թող ներկայ ժամուս ընդարձակ կայսրութեան մէջ մռնչող փոթորիկը ջնջէ քեզ աշխարհի երեսէն, ինչպէս չարաղէտ ուրուական մը—քեզ, քուկիններդ, և քո արիւնարբու վայրագ կօզակներդ։ Թող մոռցուի անունդ և կորսուի յաւիտենական խաւարի մէջ՝ ինչպէս իշխանութեանդ վերջին հռնչիւնը՝ անհուն անդունդի մէջ։

Բազմաթիւ նահատակները Բաքուի, Շուշիի, Երևանի և Նախիջևանի, ինչպէս և քու մեղսակիցներուդ ձեռքով աւերակ դարձած բոլոր հայ գիւղերը՝ քեզի դէմ կը կանգնին։ Աշխարհ-արարած գիտէ որ ռուսօ-թաթար ոստիկանութիւնն է Կովկասեան սարսափներու կազմակերպողը և թերևս վաղն ալ պիտի կազմակերպէ անոր շարունակութիւնը։ Ամբողջ աշխարհ գիտէ, որ բռնապետութեան զօրքերը միջամտեցին պաշտպանելու համար մահմեդականները քրիստոնեաներու դէմ, որոնց անապասելի և կորովի դիմադրութիւնը թշնամիի բանակը վհատեցուցած էր։ Ամէն ոք գիտէ, որ այսօր ևս վարձկան ոստիկանութիւնը կը շարունակէ հայերը ջնաթափ ընել և Թուրքերուն զէնք տալ։ Վերջապէս ամբողջ աշխարհ գիտէ, որ ռուս կառավարութիւնը յանցաւորները գտնելու և զանոնք պատժելու կեղծ փորձ մը ևս չըրաւ։ Սակայն հակառակ այդ բոլոր ոճիրներուն, դաւադրութիւնը չը յաջողեցաւ ամբողջութեամբ։ Քաջալերուած և զինուած հայ կոմիտէներէն, մանաւանդ Հ. Յ. Դաշնակցութենէն, հայերը յաղթանակօրէն դիմադրեցին վատասիրտ յարձակողներուն և զանոնք վախցնելու նպատակով՝ յարձակողականի անցան։

Զուր տեղը չէ որ մութ Թուրք լրագրող մը իրեն թոյլ տուեց հետևեալ սրտազեղ տողերը. „Երբ օրթոտոքս ռուս մը Թուրքի մը կը հանդիպի, արիւնակցութեան ձայնը կը սկսի խօսիլ, ռուսը իր թաթար եղբօրը առջև կանգ կ'առնէ և անոր մէջ ֆիզիքական և բարոյական ազգակցութեան գծերը կը գտնէ“։ Երբե՞օք որ ռուսներու մասին է խօսքը։ Անշուշտ ռուս մտաւորականութեան մասին չէ խօսքը, այլ նոյն այդ մտաւորականութեան թշնամիներու, այն չարագուշակ տարրերու մասին, որ թաթար-մոնգոլական կառավարութիւնը ժառանգութիւն ձգեց. այն յետամնաց և հարստահարիչ տարրերու մասին, որոնց լուծին ներքև կը հեծեն ցարերու կայսրութեան բոլոր ազգերը, նոյն իսկ ռուսները։ Այս տարրերու մարմնացումն են Ցրեպով և իր բարեկամ դահիճները։ Եւ ահա մեր աչքերու առաջ կը պարզի ռուս մտաւորականութեան համաշխարհային մոլեգին ճակատամարտը—հայերու և վրացիներու հետ միացած, մինչև այժմ անքաղաքակրթելի ազգի մը մնացորդներու՝ դէմ։

Ներկայ վայրկեանը լեցուն է սպառնալիքներով ու յոյսերով։ Արդկութիւնը վիթխարի աղէտի մը առաջ կը գտնուի։ Ռուս-թաթարական բռնակալութեան վերջնական անկումովը Մեծ-Մարդասպանին գահն ալ պիտի գլորուի։ Ազատութեան բոցը կայծակի արագութեամբ տարածութիւններ պիտի անցնի, և Նոյնիսկ Եւրոպան ազատ պիտի շնչէ։ Ամբողջ երկիրը երկար ժամանակէ ի վեր արիւնով յափրացած, խաղաղութիւն և իր բոլոր զաւակներուն բարգաւաճում կը պահանջէ։

Մօտ է լուծումը։ Եւ ան առանց ձեզի չը պիտի կատարուի։ Դէ՞պի գործ ուրեմն, քաղաքացիներ, հայեր ու վրացիներ, նա որ կը յուսայ, նա որ կը վախնայ, և նա որ կը սիրէ. նա որ գիտէ և նա որ կը հասկնայ, դէ՞պի գործ, և եթէ հարկ է դէ՞պի զէնք, և բոլորդ միացած։

Չը մոռանաք զիրար, նոյնիսկ ահռելի կռուին մէջ, որովհետև կռուի համար չէ որ պիտի կռուիք, գիտէք որ կռիւը վերջին խօսքը չէ։ Նպատակը քաղաքակրթութիւնն է, որուն դուք առաքեալներն ու մարտիրոսներն էք։

Հայութեան ոգին վեհանձն է, և անկարող յետամուտ լինելու՝ անգութ և արիւնալի երկար վրէժխնդրութեան զգացումին և կամ իր թշնամիներու ջնջումին։ Հայ ժողովուրդի գոյութիւնը ապահովել, համաշխարհային առաջադիմութեան աշխատակցիլ և թուրքը քաղաքակրթել. Ահա իր նպատակը։

Միթէ ա՞յս չէր Բաֆֆիի, ականաւոր հայ բանաստեղծի երազը, թշուառութեան մէջ տառապող նահատակի երազը, որ քիւրդերի ձեռքով սպանուած իր սիրելին գերեզմանի վրայ նստած՝ կ'երազէր սիրուն ապագան, ուր այլ ևս գոյութիւն չունի ատելութիւն, ուր հայ, քիւրդ, թաթար մանուկներ միևնոյն վարժարանը կը յաճախեն, բոլորը միասին, իբրև խաղաղ և համերաշխ ընկերներ։

ԻԼԶԷ ՓՐԱՊԱՆ

ՅՈՐԴՈՐՆԵՐ ԵՒ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ ՀԱՅԴՈՒԿՆԵՐՈՒՆ

(Մի հատուած անտիպ ձեռագրէ, որ լոյս պիտի տեսնէ առանձին)

Զինուորներ.

1. Հայդուկային կեանքը՝ կրցողի համար ամենաախորժելի ու վսեմ կեանքն է աշխարհիս մէջ, չը կրցողի համար՝ ամենադժուարն ու դժնդակը։ Տասը տարուան մէջ չը տեսայ զինուոր մը, որ հիւանդութենէ մեռնէր, բոլորն ալ քաջառողջ եղած են իրենց յեղափոխական կեանքին մէջ։ Պէտք է ըսել որ մեր վհատպանծ ու ծաղկաւէտ սարերու օդերը, հրաշալի աղբիւրներն ու ջուրերը, զինուորներու կերած բանջարեղէնները, կաթն ու մածունը և իրենց խղճի հանգստութիւնը, անոնց կրած սիրուն հրացանները և քաջալերող փամփուշտները շատ ու շատ կօգնէին անոնց առողջութեանը։

2. Երբէք ալ չը կարծէք թէ խմբապետութեան մէջ մեծ փառք մը կայ, ընդհակառակը՝ խմբապետը խմբի

ծառան է և բոլոր ժառանգութիւնը անոր վրայ ծանրացած է. զինուորներու կեանքի ապահովութիւնը, գործերու ընթացքին մէջ ունենալիք հեռատեսութիւնը, կառավարութեան միշտ լարած դաւադրութիւնները նախատեսելը, ժողովուրդը զինելու խնդիրը, քիչ զոհ տալով կամ բնաւ զոհ չը տալով կռիւներէն դուրս գալը և խնամոտ ճարպիկութեամբ երկար տարիներ գործը շարունակելը—այս ամենը խմբապետի հոգալու բաներն են։ Անշուշտ, այդ բոլորի հետ կապ ունի նաև ժողովուրդը, քանի որ առանց անոր քաջալերութեան և գործնական մասնակցութեան ոչինչ չենք կրնար ընել։

3. Կը պատահի որ ձեր խմբապետը զանազան մտատանջութիւններով դրգռած, մինչև իսկ բոլորովին անտեղի, մէկ կամ երկու քիդ վրայ բարկանայ և անտեղի քայլեր անէ, չը լլլայ որ վիրաւորուիք։ Ի հարկէ՝ եթէ դուք մէկ մտածէք, անիկա պարտաւոր է հարիւրը մտածել. և ուստի պէտք է դուք զիջող ըլլաք, չը վիրաւորուիք և չը խռովիք։ Առհասարակ բոլոր ընկերներդ պէտք է իրարու վրայ ցաւիք և գուրգուրաք. այս է ձեր գլխաւոր ազնուութիւններէն մէկը։ Խմբապետն ալ զգալով, որ իր ըրած յանդիմանութիւններն ու վարմունքն անտեղի էր, պէտք է անմիջապէս զինուորի սիրտը սիրաշահէ։

4. Միշտ նայեցէք ձեր խմբապետին—կռիւի և խաղաղութեան ժամանակ—թէ ինչպէս գործ կը ղեկավարէ, որ դուք ալ հետզհետէ փորձառութիւն և հեռատեսութիւն ձեռք բերէք։

5. Զինուորական խորհուրդի ունեցած գաղտնի որոշումներն իմանալու չը հետևիք։ Երբ ձեզի վերաբերեալ խնդիրներ եղան, կը յայտնեն ձեզի. իսկ եթէ ձեզ վերաբերեալ գործ չէ, իրենց մէջ կը պահեն։

6. Երբ խմբապետը հրաման ըրաւ դիրքէ մը ուրիշ դիրք փոխադրուելու, կողք տալով թշնամու կողմը՝ շատ արագ և ծուռ ու մուռ շարժումներով կ'երթաք ցոյց տուած դիրքը։ Կռիւի ժամանակ փամփուշտները խնայեցէք. լսեցէք ձեր հրամանատարին. առանց հրամանի պարապ տեղ չը կրակէք. ընելիքնիդ մէկ կռիւ չէ։ Դեռ շատ կռիւներ ունիք մղելիք թշնամուն հետ։

7. Հրացանները քանդած և սարքած ժամանակնիդ՝ զգուշացէք, որ քանդչի բթով չը վիրաւորէք „վինդերու" գլուխները։ Վինդ քանդելու համար, նաև քանդիչի բերանը լաւ պէտք է լինի։ Թէ քանդելու և թէ սարքելու ժամանակ՝ երբ քանդիչը վինդի գլուխն էք անցուցեր, պէտք է ձեռքերնիդ ուղիղ պահէք և թեւերնիդ ամուր, որ քանդիչը պարապ չը դառնայ։

8. Խաղաղ ժամանակ բարակ թոկի վրայ անցուցէք շոր մը և հրացանները այնպէս մաքրեցէք։ Երբ մաղաչափ վիրաւորէք փողը՝ կրակած ժամանակ փամփուշտը վիրաւոր դուրս կը հանէ, մինչև անգամ կարող է փամփուշտը կտրել։ Այս կէտը լաւ մտքերնիդ պահեցէք։

9. Ամառը եթէ ոզնի պատահի, նրա իւղը առէք և պահէք ձմեռուան համար։ Հրացանի սիւրմէնեռուն (զատուոր) ոզնու իւղը քսելուն պէս՝ մեքենայի նման կը բանի. այս փորձուած է։ Ոզնու իւղի հետ խառնեցէք քիչ ալ քարիւղ (նաւթ)։ Միւս իւղերը հրացանի „զատուորը" կը փչացնեն և շատ դժուարութեամբ կը բանի։

10. Հրացանները մաքրած և փամփուշտները մէջը փորձած ժամանակնիդ, դատարկ լինի հրացանը թէ լեցուած, պէտք է սովորութիւն ընէք բերանը դէպի վեր բռնել։ Եթէ ընկեր մը, մինչև անգամ երբ հրացանը դատարկ է, ընկերոջ մը կ'ուղղէ անոր բերանը կամ անծանօթի, պէտք է խիստ յանդիմանել՝ մինչև անգամ պատժել այդպիսի ընկերը։ Վտանգ չը պատահած՝ խիստ լինելու է, եթէ ոչ՝ երբ ընկեր մը կամ ժողովրդէն անհատ մը վիրաւորուեցաւ կամ սպանուեցաւ, կ'ուզէք փոխարէնը սպաննէք այն ընկերը, որու ձեռքէն կրակը բացուեցաւ—ի՞նչ օգուտ։ Այս կէտը լաւ ականջնիդ պահեցէք։ Ընկերասպան մը մինչև վերջին շունչը պէտք է խղճովը տանջի՝ եթէ զգացումի տէր է։

11. Ձմեռ ժամանակ ձեր հրացաններու զատուորներու վրայ մուշամբայի կտորներով ծածկոյթ շինեցէք, անցուցէք վրան և կոճակներով կոճկեցէք, բայց ոչ բոլորդ։ Խմբի առաջէն գնացող չորս հոգիները չը պէտք է անցնեն այդ ծածկոյթը և հրացաններու բերանը շորով գոցելու չեն. տեսաք յանկարծ թշնամի պատահեց, առաջին կրակը միշտ պէտք է ձեզնէ բացուի թշնամու վրայ։

12. Ձեր հագուստի կամ ուտելիքի համար խստապահանջ չը լինէք՝ ըսելով թէ այս ինչ ընկերը լաւ կտորէն շոր հագած է, իսկ ես վատ կտորէն հագած եմ։ Ամեն մարդ պարտաւոր է խնայողութիւն ընել։ Մեր ամենակարևոր պիտոյքներն են՝ փամփուշտ, վառօդ, գնդակ, կապսիւլ, պահեստի պաշար, փամփուշտ լեցնելու գործիքներ, ոտնամաններ և գուլպա։

13. Մեր եկած ժամանակ՝ ի հարկէ ժողովրդի մէջէն բարեկամներ կ'ունենաք, միշտ անոնց հարց ու փորձ ըրէք։ Եթէ ընդհանուր գործի կամ խմբի վերաբերեալ որևէ վտանգաւոր լուր մը լսէք, անմիջապէս յայտնեցէք ձեր խմբապետին կամ տասնապետներուն։ Ձեզ պատմուածը մինչև իսկ սուտ ալ լինի, յայտնեցէք ձեր պետերուն. անոնք այդ հարցը մանրամասնութեամբ կը քննեն և պէտք եղած զգուշութիւնները ձեռք կ'առնեն։

14. Ուտելիքին պէտք է հաւասար նայէք. խնձոր մը իսկ լինի, պէտք է հաւասար բաժնէք։ Կերակուրի ժամանակ բոլոր զինուորները տասնեակ-տասնեակ պիտի նստին և տասնապետներն ալ տասնեակներու հետ։ Հաց ուտելու ժամանակ տասնապետները առանձին չը պէտք է նստին։

15. Ճամբորդութենէ մը երբ ձեր բնակած տեղը հասնիք, մօտիններու մէջէն փամփուշտները դատարկեցէք։ Բերդանի կամ որևէ ուրիշ հրացանի մը մէջ, որ մէկ փամփուշտ կ'առնէ, երբէք փամփուշտ չը դնէք։ Ուր որ ալ լինի վտանգ պատահած ժամանակ փամփուշտ դնելը շատ դժուար չէ։ Ձեր բնակավայրը հասնելուն պէս բոլոր հրացանները դատարկեցէք, շատ լաւ մաքրեցէք, և զատուորներէն ալ կախեցէք, որ զսպանակները չը թուլանան։

ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

ԹԻՒՐՔ-ՊԱՐՍԿՍԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԼԽԻՑ

1906, ապրիլի 30

Վասպուրականի շրջանից սուրհանդակով ստացած նամակները կը հաղորդեն հետևեալ տեղեկութիւնները.

Վանի մէջ ջամիներում (աղօթարաններում) ժողովներ կը լինին՝ յայտնի շէյխերի և մոլլաների ղեկավարութեամբ, որոնք բացարձակ կոտորածի կոչեր կընեն։

Արձէշ ատոր նշանը արդէն տեղի ունեցած է։ Մարտի վերջերը Թիւրքերը յարձակուած են եկեղեցու վրայ հայերը կոտորելու. բարեբախտաբար ուշ կը հասնին—ժողովուրդը ցրուած կը լինի, միայն 10—15 մարդ կը վիրաւորուին դաշոյններով ու փայտերով։

Վանի մի թաղում նոյն տեսակ փորձ տեղի կ'ունենայ։ Ամբոխը կը պատրաստուի յարձակիլ, բայց զօրքը կարգելէ՝ անժամանակ և անպատեհ համարելով։ Այդ թաղի ժողովուրդը երկիւղի մէջ է։

Տեղեակ աղբիւրներէ բղխած լուրերին նայելով՝ Պոլսէն հինգ պալատականներէ բաղկացած մասնաժողով մը գալու է Վան իբր թէ բարեփոխութիւններ մտցնելու, բայց երևի հակահայկական շարժում ղեկավարելու համար։

Շատ դէպքեր եղեր են, որ Թիւրքերը իրենց պարտքերը և հայերէ գնած ապրանքներու գները չեն վճարեր, սպառնալով, թէ „եթէ համարձակուիք պահանջել՝ ձեզ կը կոտորենք“։

Մարտի սկիզբները 200 զինուոր խուզարկութեան կերթան Ալևոր գիւղը թնդանօթներով, նաւթով։ Ի հարկէ ոչինչ չեն գտներ։

Լուր կայ, որ մօտ ժամանակներս Վանի մէջ խուզարկութիւններ պիտի լինին, այն ալ զինուորական—ամբողջ թաղեր։ Հիւպատոսները երաշխաւորութիւն ուզած են, որ խաղաղ ժողովրդին չը դպչին. երաշխաւորութիւն չեն տուած։

ՆՈՐ ՀԱՐՒԱԾՆԵՐ

(Նամակ Կիլիկիայէն)

ՊԷՅՐՈՒԹ, 20 մայիս

Երէկ ռուս բռնապետութիւնն էր որ կը փորձէր յափշտակել հայ ժողովրդի եկեղեցական կալուածներն ու իրաւունքները՝ յանուն ցարիզմի, այսօր ալ Եըլդըզի խենթը, հայ արեան այդ անկուշտ յարալէզը՝ քաջալերուած իր հիւսիսային դրացւոյն ցնորած օրինակէն և գինովցած իր բարեկամին, Վիլհելմին, մեծամոլութիւններուն իւրացումովը, իր հիւանդ մտքին մի մոլեգին ախտաժամին՝ կուգայ էջ մը ալ աւելցնել իր բռնութիւններու տարեգրութեան—յաքքունիս գրաւելով դարերէ իվեր Կիլիկիոյ Աթոռին անվիճելի սեփականութիւնը եղող Թլանի Ագարակ կոչուած հողային մեծ կալուածքը, որ գրեթէ հասոյթի միակ աղբիւրն էր Կիլիկիոյ Աթոռին։ Եւ աս ալ՝ յանուն Եըլդըզի տխրահռչակ անկիւններում մշակուած այն հայաջինջ ծրագրին մի յօգուածին՝ անհրաժեշտ պէտք մըն է իսլամ վանդալներ տեղաւորել հայ ազգաբնակութեան սիրտը կազմող կետրոնին մէջ, որպէս զի այս արիւնարբու ու աւերիչ տարրերը քամեն ու ցամքեցնեն ինչ որ մնացած է հայ արիւնէն։

Կարևոր նշանակութիւն ունեցող այս բօթը կայծակի արագութեամբ տարածուեցաւ Կիլիկիոյ ամբողջովին թմրած մթնոլորդին մէջ ու ահա քնացող Կիլիկիան սրտեր ցնցուեցան աս անակնկալ հարուածին ազդեցութեամբ։ Առաջին վայրկենին շատեր սկեպտիկ ժպիտով մը վերաբերուեցան դէպի այս լուրին ստուգութիւնը, որովհետև ո՛չ ոք հաւատալ պիտի ուզէր, որ Կիլիկիոյ կաթողիկոսին շնորհուած „կայսերական ունկնդրութեան“ միջոցին տրուած այդքա՜ն յուսալից և փայլուն խոստումներէ վերջ՝ բարեհնամ ու հպատակասէր սուլթանը փափագէր խանգարել ու վրդովել իր „հաւատարիմ հպատակներուն“ անդորրութիւնը։ Նոյնիսկ Կիլիկիոյ Սահակ կաթողիկոսը այս ազէտքը գուժող հեռագիրը ձեռքը բռնած՝ կէս քուն կէս արթուն աչքերը շփելով, չէր ուզեր հաւատալ որ իր „բարեգութ կայսրը“ այդքան փայլուն կապիտոլէ մը վերջ զինքը առաջնորդէր Տարպեան ժայռերուն։ Աւա՜ղ փառաց անցաւորի... Խեղճ կաթողիկոսը կը նմանի այն հիւանդին, որ իր սուր ցաւերը քիչ մը ամոքելու համար նեբարկուած մորֆինի կարճատև ազդեցութիւնը անցնելէ վերջ, յամառօրէն չուզեր հաւատալ աւելի խիստ կերպով վերսկսած ցաւին։ Վա՜յ միամիտներուն...

Տակաւին երկու տարիները չը լրացան այն օրէն, երբ հեռագիրը կ'աւետէր Միջերկրականի ափերէն մինչև Տաւրոսի գագաթները, Սիհանի եզերքներէն մինչև Եփրատի եզերքները կայսերական մեծաշուքիդ „բերկրարիթ“ շնորհքները, զորս Աբդիւլ-Համիդ՝ ունկնդրութեան միջոցին, կաթողիկոսին խոստացած էր „արդարութիւն“, „անհատական և ազգային իրաւունքներու յարգում“, „քաղաքական բանտարկեալներու ազատ արձակում“, „ճամբորդելու դիւրութիւն“ և այլն և այլն։ Այո՛, արդարութիւնը իրագործուեցաւ „շնորհիւ վեհափառ կայսեր“, այո՛, անհատական և ազգային իրաւունքները ճանչցուեցան ու յարգուեցան... Տեսէ՛ք, երէկ ն ա ճ ա ր լ ը հայ գիւղին բնակիչներուն ձեռքէն իրենց սեփական հողերը առնելով՝ Թիւրք մուհաճիրներուն բաշխեցին, այսօր ալ Թ լ ա ն ը կը յափշտակեն ու թաթարներուն պիտի բաշխեն։ Այո՛, քաղաքական բանտարկեալները արձակուեցան—Գ օ մ ա ն տ ա ն ի մը հիւանդոտ խելապատակին մէջ ծնունդ առած անձնական մեծամիտ ծրագիր մը հարիւրաւոր անմեղ հայեր հաւաքեց Հալէպի բանտին մէջ, որոնք ուրիշներէ իվեր առանց ոևէ հարցաքննութեան կը հեծեն խոնաւ զընտաններու մէջ։ Եւ այս ալ շնորհիւ ամենաողորմած վեհ. սուլթանին արդարասիրութեանը։ Այո՛, ճամբորդելը դիւրացաւ հայու համար... Հայը այսօր մեծ արգելքներու ենթարկուած է իր բնական կուսակալութեան մէջ իսկ ճամբորդելու։

Խեղճ և անհեռատես կաթողիկոսը մեծ մեծ բառերէն շլացաւ, շփացաւ ու... խաբուեցաւ, բոլորովին անտեղեակ համիդական ռէժիմին մաքիավէլական մեքանայութիւններուն։ Եըլդըզը՝ ուր օշարակի ձևով ու

գոյնով թոյներու բաժակներ հրամցնելու գաղտնիքը շատ լաւ գիտեն, Եըլդըզը՝ ուր թունալից երգիծանքը շինծու և մեղմ ժպիտներով դրուագելու խորամանկութիւնը ունին, Եըլդըզը՝ ուր մասնաւոր առանձնաշնորհումը ունին մէկ ձեռքով երաշներ շնորհելու ու միւս ձեռքով իրականութիւններ խլելու, Եըլդըզը՝ ուր իրատէներ հրատարակելը և ազոնք չը գործադրելը սովորութիւն մը դարձած է, բնականաբար դժւարութիւն մը չը պիտի քաշէր Սահակ կաթողիկոսի պէս իր կեանքին մեծագոյն մասը վանքի մը անկիւնը անցուցած մէկ մարդուն աչքը փոշի նետելու. ու իրաք ալ յաջողեցաւ։ Կիլիկիոյ կաթողիկոսը ո՛չ դիւանագիտութիւնը ունէր և ո՛չ ալ ունակութիւնը կռահելու համար Համիտներու, Իպրահիմներու և Իզզէթներու հոգեբանութիւնը։

Կաթողիկոսը խափեցաւ, ժողովուրդն ալ մէկտեղ։ Բայց ամեն ինչ կորսուած չէ։ Մեր ժողովուրդը պատմական մեծ դերի մը կոչուած է. թո՛ղ օրինակը իր Կովկասեան եղբօրմէն առնէ, թո՛ղ աչքը տնկէ Ցեղափոխութեան, որ պատմական պէտք մըն է այս անօրէն երկրին մէջ, որովհետև „հպատակները“ ոչ թէ պաղատանքով կը տիրանան իրենց ազատութեան, այլ այն ճանապարհով, որ գծած է Ցեղափոխութիւնը։

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐ

ԴԱՐՁԵԱԼ ՎԱՏ ՆՇԱՆՆԵՐ

Շուշի, մայիսի 2

Վարանդայում կատարուած բռնութիւնները, մեր մի շարք բողոքող հեռագիրները, Վէյդէնբաումի կատարած քննութիւնը, ապացուցած փաստերը, քննիչների տուած խոստումները, փոխարքայի արտայայտած զայրոյթը, տեղի ունեցած դէպքերի առթիւ, համարեա դրական ոչինչ չտուեցին, բացի Երմօլայեվի Գանձակ կանչուիլը։ Բարանովսկին պտտում է գիւղերը և թեթև քննութիւններով է զբաղուած։ Ջինւորական քննիչը և պրոկուրորը դեռ գիւղերը չեն անցել։ Մալամայի գալը նոյնպէս ոչինչ չտուեց։ Եկաւ, իսկոյն անցաւ Գորիս, միւս օրը վերադարձաւ, ընդունեց մի քանի մարդկանց, ի թիւս որոց մի խումբ օրիորդներ ու տիկիններ, համաձայնուեց որ „իսկապէս շատ ցաւալի դէպքեր են տեղի ունեցել“, որ յանցաւորները կը պատժուին, որ ինքը յատկապէս քոչի խնդրով է եկել և... վերադարձաւ Թիֆլիս։

Շարունակ մեզ տեղեկութիւններ են տալիս, որ կօզակները նորից պէտք է այցելեն Վարանդայի ու Խաչէնի գիւղերը շարունակելու իրենց բարբարոսութիւնները։ Ժողովուրդը ահ ու սարսափի մէջ է։ Վերջին դէպքերը ժողովրդին յուսահատութեան մէջ են գրցել, չնայած որ մեր ընկերները շարունակ պտտում են այնտեղ՝ յուսադրելու նպատակով։ Կառավարութեան պնդումները, յանձնել յեղափոխականներին— „բոլոր չարիքների պատճառներին“, կարծէք ազդում է մեր անհեռատես և անգիտակից ժողովրդի վրայ։ Բոլոր պաշտօնեաների գաղտնի նպատակը այժմ այդ է—պառակտումն գցել ժողովրդի և յեղափոխական տարրերի միջև ու բերել ամբոխին այն համոզման, որ եթէ երես դարձնեն յեղափոխականներից, կառավարութիւնը անմիջապէս խաղաղութիւն կը շնորհի բոլորին։ Տարաբախտաբար, մեր ընկերներից շատերի անունները տարածուած են. թէ ժողովուրդն է ճանաչում նրանց և թէ կառավարութիւնը։ Ազատ չեն կարողանում գործել, վախենալով ձերբակալութիւնից։ Այս հանգամանքը մեծ վնաս է տալիս մեր ձեռնարկներին,—մարդիկ փախստական դրութեան մէջ՝ շատ քիչ գործ են կարողանում կատարել։ Անհրաժեշտ է կառավարչական այս խորամանկութեան առաջն առնել։

Թիֆլիս, մայիսի 16

Շուշուց ստացուած է հետևեալ պաշտօնական հեռագիրը։ Հայերի ու մուսուլմանների մէջ փոխադարձաբար տեղի ունեցող մարդկանց գերելու, անասուններ յափշտակելու և սպանութիւնների փաստերը լարեցին երկու ազգութիւնների յարաբերութիւնները։ Քաղաքի մէջ երթևեկութիւնը մի մասից միւս մասը ընդհատուում է։ Իւլախ—Շուշի խճուղին անապահով է։ Դրութիւնը չափազանց վրդովեցուցիչ է։

Շուշի, մայիսի 16

Հայերի ու մուսուլմանների մէջ փոխադարձաբար մարդկանց գերի վերցնելը, խուլիգանների յարձակումներ ու սպանութիւններ կատարելը և պրովոկացիաներ անող տեղական բէգերի գաղտնի ինտրիգները, տգէտ մասսան շահագործելը՝ ազատ կերպով շարունակուում են։ Քաղաքի և գաւառի դրութիւնը չափազանց երկիւղալի է. խնդրում ենք միջնորդել փոխարքայի առաջ այստեղ ուղարկել գեներալ Գոլոշչապովին, իսկ Վեվերնի պատժիչ զօրախմբի գործողութիւնները առայժմ դադարեցնել տալ, մինչև որ երևան կը հանեն վերջին դէպքերի իսկական յանցաւորները։

Շուշի, մայիսի 16

Գեներալ Մալամայի Գորիս ուղևորվելուց մի ժամ յետոյ, Լիսօգորի ճանապարհին թուրքերը յարձակուեցին հայ կարաւանի վրայ, սպանեցին երկուսին և չորս հոգի էլ գերի տարան։ Ապրիլի 30-ին թուրքերը յարձակուեցին Գերգեր գիւղի վրայ, մորթեցին եօթ հոգու, ի թիւս որոց Ախտա գիւղացի Ստեփանեանցին։ „Խանի-բաղի“ մօտերքում եղած ընդհարման ժամանակ սպանվել են մի հայ սայլապան և մալիքեկլուեցի մի թուրք։ Վիրաւորուել են մի հայ և երկու թուրք։ Մալէբէկլուեցիները քշեցին տարան գաղդաղանցիների անասունները, գերի վերցրին շուշիքենդցի Դանիէլեանցին։ Մայիսի 9-ի գիշերը Խօջալուի մօտերքում սպանուել է մի մուսուլման, այդ միևնոյն ժամանակներում անհետացել են եօթ թուրքեր։ Մուսուլմանները մեղքը գցում են հայերի վրայ. ուստի պատժիչ զօրախումբը այսօր գնում է պատժելու շրջակայքի հայ գիւղերը՝ իրեն յատուկ անարդարութեամբ։

Թիֆլիս, մայիսի 16

Պաշտօնական հեռագիր։ Ջիվանշիրի գաւառի շրջանում Խաչէնի մօտերում գերի են տարուել մի քանի ճանապարհորդ հայեր։ Որոնումները շարունակուում են։ Հէնց այս լրագիս Արամեանցը հեռագիր է ստացել

Եւլախից, մի ոմն Լիստիրմանից, հետևեալ բովանդակութեամբ. „Ձեր ազգականներին այսօր Շուշի տանող ճանապարհի վրայ թուրքերը բռնել են։ Բոլորը՝ իններ հայ ճանապարհորդներ են։ Ինձ, իբրև ռուսի, արձակեցին“։ Քաղաքի դրութիւնը լարուած է։

Շուշի, մայիսի 16

Մայիսի 15-ին, երեկոյեան դէմ կայարանում կայծակի արագութեամբ լուր տարածուեց, որ Աղդամի մօտերքը, խճուղու վրայ թուրքերը կանգնեցրին երկու հանրակառքեր, առանձնացրին ճանապարհորդ հայերին, և ուրիշ ազգութեան պատկանող ճանապարհորդներին արձակելով, առաջարկեցին վերադառնալ Եւլախ, իսկ հայերին գերի տարան։ Այդ լուրը ստուգելուց յետոյ պարզուեց հետևեալը։ Առաւօտեան Եւլախից Շուշի ուղևորուեցին երկու հանրակառք. ճանապարհորդները տասը հոգի էին, որոնցից երեք հայուհի իրենց երեխաներով, երեք ռուսներ և մի հրէայ։ Ճանապարհին մինչև Աղդամ գիւղի սահմանները բոլորովին խաղաղ էր, բայց մի քանի վերստ հեռու այդ գիւղից, ուր գտնուում է պօստի կայարանը, երկու հանրակառքերն էլ շրջապատվեցին 40 զինուած թուրքերով, որոնք առաջարկեցին ճանապարհորդներին իջնել և, նախապէս կողոպտելով բոլորին, հարցաքննեցին ու ջոկեցին հայերին, որոնց և գերի վերցրին։

Այդ տեղեկութիւնը այստեղ ճնշող տպաւորութիւն թողեց։ Փաստօրէն պօստի խճուղին փակուած է և յարաբերութիւնները Շուշու ու երկաթուղու միջև ընդհատուած։

Շուշի, մայիսի 17

Տխուր լուրեր են ստացուել այստեղ։ Այն ինչից որ վախենում էինք, կատարուեց։ Սուլթանբէկի անտառում, Խաչէն գետի մօտերքում, գտնուած են 10 դիակ։ Դրանք հաւանօրէն գերի վերցրած հայերի դիակներն են։ Հաղորդում են, որ Աղդամի և փիր-Բուլաղի միջև տեղի է ունեցել հրացանաձգութիւն։ Կողոպտուած են հայերի մի քանի ֆուրգոններ։ Վեվէրը վերցրել է հայ գիւղացիներից 3000 ռուբլի տուգանք. իբրև պատիժ գերի ընկած թուրքերի համար։ Նրան յանձնուած է նոյնպէս հայ գերիների ազատելը թուրքերի ձեռքից։ Աւելի չարամիտ կարգադրութիւն չէր կարելի սպասել։ Խանքենդում սպանուել են մի հայ և մի թուրք։ Ընդհանուր տրամադրութիւնը շատ ճնշող է։

Եւլախ, մայիսի 17

Մայիսի 14-ին Շուշու գաւառի սահմանի վրայ, Խաչենկա գետի մօտ, վեց թուրքեր բռնութեամբ գերի վերցրին պօստի տրակտի կառքերով Շուշի գնացող չորս հայերի ու տարան Շուշու գաւառը։ Հայերից կողոպտուած իրերի մի մասը գտնուած է։ Մայիսի 15-ին, կէս օրուայ մօտերը, Աղդամի պօստային տրակտի վրայ թուրքերը կողոպտեցին երկու հանրակառք և գերի տարան 14 հայեր։ Գերիներին որոնելու համար կօզակներ են ուղարկուած։ Ճանապարհը փակ է։ Ոչ ոք չէ վստահանում Շուշի ուղևորուել։ Հայ գերիների մասին դեռ որոշ բան յայտնի չէ։ Տեղեկութիւններ են ստացուած, թէ Աղդամի մօտ՝ Սուլթանբէկի անտառում գտնուած են 10 դիակներ։ Լուրերին նայելով հայերն էլ մի քանի թուրք գերիներ են վերցրել։ Ամեն կողմից նկատուում են պրովակացիայի նշաններ։

Թիֆլիս, մայիսի 19

Շուշուց եկած մի թուրք պատմում է հետևեալը։ Մի քանի օր առաջ հայկական մասում ցրուում ու պատերից քարշ են անուում թռուցիկներ թուրքերի կողմից, որոնց բովանդակութիւնն այս էր։ „Հայերը չը կարծեն, թէ մենք խաղաղուել ենք, մենք ձեզ նորից կուի ենք կանչում իբրև անհաշտ թշնամիների“։ Մէկ երկու օրից յետոյ համարեա նոյն նախադասութիւններով մի ուրիշ թռուցիկ է լոյս տեսնում թուրքական մասում հայերի կողմից։ Նոյն թուրքը պատմում է և այս փաստը, որ ռուս սպաներից մէկը ասել է թուրքերին. „միւս շաբաթ իմ հերթապահութեան օրն է և ես ձեզ լիազօրութիւն եմ տալիս յարձակուել հայերի թաղերի վրայ. իմ կողմից ոչ մի խոչնդոտ, ոչ մի արգելք չի լինի“։ Պրովակացիան նորից սկսել է արիւնահեղութիւնների սերմեր ցանել։

Շուշի, մայիսի 19

Խանքենդու մօտ թուրքերը սպանել են Շօշ գիւղի բնակիչ Ժամհարեանին։ Շուշի-Եւլախ խճուղին փակուած է հայերի համար։ Սկսած մայիսի 14-ից հայերի ապրանքները և ուտելու մթերքները կամաւ տեղ չեն հասցուած մալիբէկլուեցի թուրքերի շնորհիւ։ Գենեռալ-նահանգապետ Ալիֆտանը Շուշումն էր։ Գնաց Խանքենդի, խոստացաւ գտնել գերիներին, որոնց թիւը, ըստ երևոյթին, շատ է։ Ոչ ոք նրան հաւատ չի ընծայում։ Երէկ մահմեդականները յարձակուեցին հայ Խծաբերդ գիւղի վրայ։ Հետևանքները յայտնի չեն։

Շուշի, մայիսի 19

Երեք օր է թուրքերը սաստիկ բոյկոտ են յայտարարել հայերի դէմ և ոչ մի ապրանք չեն ծախում։ Թուրքի բազար գնացող գնորդներին, նոյն իսկ ազդեցիկ հայերին, նրանք հայհոյել ու ճանապարհ են դրել։ Մէկը մինչև անգամ ասել է. „Այս ռուսը մեր արանքից ձեռք չը քաշեց, որ մենք իրար կոտորէինք ու պրծնէինք...“ Դրութիւնը սաստիկ լարուած է։ Չը նայելով այդ ամենին՝ քոչը գնում է անփորձ, անվընաս. հայերը չեն դիպչում։ Դէպի Եւլախ գնալը բիսկի բան է. շատ մարդ սիրտ չէ անում և գործ ունեցողը մնացել է տանը նստած։ Պրովոկացիան ուժեղ կերպով առաջ է գնում։ Քաղաքը անտէր է։ Մարդ չը կայ, անող, կարգադրող չը կայ։ Ոստիկանութիւնը մարդասպաններին թողած՝ յեղափոխականներ է որոնում։

Շուշի, մայիսի 19

Քոչը քաղաքի միջով կանոնաւոր կերպով անցնում է՝ գնալով եայլաղները։ Հայկական մասով ապահով անցնելու համար հայ հասարակութիւնը նշանակել է իր կողմից թէ քաղաքի մէջ և թէ դուրսը պահապաններ, որոնք խիստ կերպով հսկում են և միաժամանակ արգելում հայերին՝ չը մօտենալ քոչուորներին, ոչինչ չը գնել նրանցից, մի՛ գուցէ որևէ աննշան գիպուած առիթ լինի զանազան անախորժութիւնների։ Ասել է թէ՝ հայերը ամեն հնար ու միջոց գործադրում են անմիտ ընդհարումներից խուսափելու համար։

Թիֆլիս, մայիսի 19

Ցարիզմի հովերը դեռ ազատ փչում են հայաբնակ վայրերում։ Նորանոր սարսափների ու խժդժութիւնների լուրեր են գալիս ամեն օր, ամեն ժամ։ Հայ գերիները ոչ գիտէ ինչ սոսկալի վիճակում սպասում են օգնութեան։ Խաչէնը Վեվերնի բարբարոսութիւններից է հեծում։ Շուշում հայ-թուրքական յարաբերութիւնները կտրած են և մթնոլորտը վտանգաւոր է դարձել։ Գանձակում և շրջակայքում դրութիւնը նոյնպէս լարած է։ Ուրիւնաքամ ու սարսափահար եղած Վարանդան իզուր արդար դատավճռի է սպասում իր դահիճների վերաբերմամբ։ Իսկ Ղազախը, Ջիւանշիրը, Արէշը, Զանգեզուրը և միւս գաւառները սոված են և մահւան սև սարսափին ենթարկուած։ Իսկ այստեղ՝ Կովկասի մայրաքաղաքում նորից հնչում են աւանդական խափուսիկ խոստումները, թէ „հարկաւոր միջոցները ձեռք են առնուած“, թէ „յանցաւորները կը պատժուեն“։ Մեր դառն փորձերը ցոյց են տալիս, թէ ինչ արժէք ունեն այդ խոստումները։ Դրանք խաբեբայութիւններ են, որոնցով բոլորն էլ, փոխարքայից սկսած մինչև վերջին թուրք պրիստաւը, ծաղրում են ամբողջ հայ ազգաբնակութիւնը և ամբողջ երկիրը։

Թիֆլիս, մայիսի 20

Հայերը շարունակում են դիմել կառավարութեան և ունայն յոյսեր տածել։ Մի քանի օր առաջ Շուշու թեմական առաջնորդը ներկայացաւ փոխարքային և խնդրեց՝ գեներալ Գոլոշչապովին, իբր անկողմնակալ անձի, նորից ուղարկել Շուշի, ապահովել Եալխ-Շուշի և Շուշի-Գորիս ճանապարհները, որոնք վերջերս բազմաթիւ արիւնարբութիւնների ասպարէզ եղան, ապահովել գիւղացիների դաշտային աշխատանքները, յետ դարձնել Վարանդայի գիւղերից ապօրինաբար առնուած տուգանքները, չը խլել զէնքերը հայերի ձեռքից ինչպէս չեն խլում թուրքերի ձեռքից, դադրեցնել Վարանդայի գիւղերում նոյն Վէվէրնի ձեռքով կատարուող խուզարկութիւնները, պատժել Վարանդայի տխրահռչակ դէպքերի չարագործ հերոսներին, թոյլ չը տալ քոչւորներին զէնք տանել իրենց հետ և նոր նշանակուած մի պաշտօնեայի, որ յայտնի է իր արիւնոտ անցեալով, հեռացնել ու տեղը նշանակել ուրիշ, աւելի վստահելի մէկին։ Փոխարքան, լսելով այդ խնդիրները, խոստացաւ բաւարարութիւն տալ բոլորին, երևի այնպէս ինչպէս բաւականութիւն է տուել ց'այժմ եղած բոլոր խնդիրքներին ու դիմումներին...

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԳՐԳՌՈՒՄՆ

Զանգեզուր, մայիսի 21

Զանգեզուրի ազգաբնակութեան աչքերի առջև կանգնում է մի ահաւոր ուրուական։ Դա քոչւորների մեր գաւառը մտնելու հարցն է, որ սպառնում է անօրինակ, արիւնոտ ընդհարումներ առաջ բերել. բարդութիւնները կարող են աւելի ու աւելի մեծ թափել մանաւանդ Սիսիանի գաւառամասը։ Այդ կողմերում թուրք ազգաբնակութեան առանձին ոգևորութիւն է ներշնչել քոչւորների գալուստը։ Ոստիկանական-բիւրոկրատական պրովոկացիան ստեղծեց Սիսիանում ընդհարում ՈՒզ գիւղացոց և Վաղադնեցի թուրքերի միջև։ Հերոսը պրիստաւ Բազումովսկին է։ Հեռաւանքը այն եղաւ, որ ուզեցիներից առել են 3000 ռուբլի տուգանք և նշանակել 7 օր էկզէկուցիա, իսկ թուրքերից՝ 1000 ռ. և երկու յանցաւոր աւազակների յանձնումն։ Բայց ձերբակալելուց յետոյ աւազակները կրկին փախել են կամ աւելի լաւ է ասել՝ բաց են թողել։ Մեղրիի շրջանում առ այժմ լուռ է, եթէ չը հաշուենք կողոպուտի, տաւար քշելու մի քանի դէպքեր։ Շիկահողեցիին սպանելու դէպքը թուրքերը վերագրում են Պարսկաստանից եկած աւազակներին, մինչդեռ դրանք տեղացի թուրքեր են եղել։ Դա հաստատում է խաղաղարար յանձնաժողովի անդամ Աբդուլ Համագբէգ Զաւանշիրը։ Զէյվի շրջականերում թուրքերի ձեռքով սպանուել են երկու բէկեր. թուրքերը դիակները տարել գցել են հայերի սահմանը, որպէսզի վերագրեն հայերին և էկզիկուցիա նշանակել տան Զէյվայում։

Առ հասարակ թուրքերը վրէժխնդրութեան կամ հայերին նիւթապէս վնաս հասցնելու նպատակով՝ աշխատում են նոյնիսկ իրենց ձեռքով սպանածներին հայերի սահմանը գցել. լինի դա նոյնիսկ գերեզմանից հանած ոսկորներ։ Նոր ապացոյցներ։ Ալիդարա թուրք գիւղի բնակիչները լսելով, որ գաւառապետը գալիս է, գերեզմանից հանում են մի դիակ և տանում գցում հարևան հայ գիւղի հողի վրայ։ Այս օրերս Նվադեցի մի թուրք հողային վէճի համար սպանում է իր համագիւղացուն։ Վկաները կենդանի են. սպանման գործողութիւնը կատարելուց յետոյ վերադառնում է գիւղը և հաւար է տալիս թէ շվանեձորցիները սպանեցին այսինչին։ Թուրքերը իհարկէ զինուած, դուրս են գալիս և պատրաստւում՝ յարձակում գործել—բայց բարեբախտաբար ականատես վկաները պաշտում են դաւադրութիւնը։ Նոյն օրինակ մի դէպք տեղի ունեցաւ գիւղի շրջանում։

Թուրքական սպանութիւններին՝ հայերը անպատասխան չեն թողնում։ Արդար պատիժն է միայն, որ սանձահարում է թուրքերի գրգռուած ախորժակը։ Ոստիկանութիւնը շարունակում է դաշնակից լինել թուրք բէգութեան։

ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՏԸ

ԵՐԵՍՈՒՆ ՀԻՆԳ ՏԱՐԻ ԱՌԱՋ

Սա մի պաշտօնական փաստաթուղթ է, գրուած դեռ այն ժամանակ, երբ հայկական յեղափոխութիւնը չէր պարգել իր մարտական դրօշը, և օրւայ նշանաբանը՝ դեռ ամենահպատակ աղերսանքն էր ու ամենախոնարհ խնդրուածքը։ Պաշտօնական թղթին յատուկ մեղմութեամբ խմբագրուած այս „Տեղեկագիրը“, որ 70-ական թուականների հայկական տանջանքների դիւանագիտական չափաւոր արտայայտութիւնն է, և պիտի մնայ իբրև անհերքելի պատասխան ու վճռական հարուած այն քաղաքական չարամտութեան, որը ամբարտաւան յամառութեամբ, նոյնիսկ մեր վշտի ծանրագոյն րոպէներին, փորձում է հայկական հալածանքի պատճառը հայկական յեղափոխութիւնը համարել

մինչդեռ այն հալածանքի սկիզբը շատ հին է և շատ վաղուց ձեռակերտած...

Դոկումենտը տպագրում ենք նոյնութեամբ, առանց որևէ փոփոխանքի։

—

Ա. ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԳԱՒԱՌԱԿԱՆ ՀԱՐՍՏԱՀԱՐՈՒԹԵԱՆՑ

Ներկայացեալ առ Բ. Դուռն յանուն Ազգային ժողովոյ

Ի 11 ապրիլի 1872.

Այլևայլ ժամանակներ. մասնաւորաբար վերջին 7—8 տարուայ միջոցին, Անատոլուի ներսերը պատահած ցաւալի դէպքերը, որոնց համար Ազգային Պատրիարքարանս գրեթէ Բ. Դրան գանգատած և անոր ուշադրութիւնը գրաւած է, ա՛յնքան բազմացան, և այս մասին Առաջնորդաց գանգատներն ա՛յնչափ ընդհանրացան, որ Ազգային Ընդհանուր Ժողովն 1870 Նոյեմբեր 27-ի նստին մէջ յատուկ Ցանձնաժողով մը կազմեց, այդ ցաւալի դէպքերը քննելու և մանրամասն տեղեկագրելու համար։

Ցանձնաժողովը յատուկ շրջաբերականներ ուղղեց առ ամենայն Առաջնորդս, որ իրենց գաւառի վիճակին և ցաւոց վրայ մանրամասն և ճիշդ տեղեկութիւններ տան, զգուշանալով ամենայն չափազանցութենէ, և ցաւոց դարմանին վրայ ալ կարծիքը հաղորդեն։

Ցանձնաժողովը՝ հասած առաջնորդական տեղեկագրութիւնները և Ազգային Պատրիարքարանի 20 տարեան արձանագրութիւնքը մանրամասն աչքէ անցնելով, և պատմած դէպքերը մանր հետազօտութեամբ քննելով՝ ստուգութիւնը բազում ապացոյցներով հաստատուած եղելութեանց վրայ յիմնելով՝ իր Տեղեկագիրը պատրաստեց։

Տեղեկագիրը մատուցուեցաւ Ազգային Ընդհ. Ժողովին, 1871 Հոկտեմբեր 8-ին, այնպիսի ժամանակի մը մէջ, յորում Կայսերական բարեխնամ Կառավարութիւնդ արդէն ուշադրութեան առած էր կայսրութեան ներքին ընթացքը, պաշտօնէից վիճակը, և մասնաւորաբար Անատոլուի գաւառաց վիճակին քննութիւնը, նորընտիր յատուկ գործակալաց ձեռօք։

Ասանկ բարեպատեհ ժամանակի մը մէջ մեր Ազգն ալ, որպէսզի ըստ կարի օժանդակ գտնուի մեր Օգոստափառ Կայսեր արթուն և լուսամիտ պաշտօնէութեան ձեռք առած այլ և այլ բարեկարգիչ միջոցներուն, կը փութայ Ընդհ. Ժողովոյ մատուցեալ տեղեկագրին գլխաւոր պարունակութիւնները՝ նոյն Ժողովին 1872 փետրուար 18-ի նստին յայտնած ընդհանուր կամքին և որոշմանը համեմատ՝ բարեխնամ Կառավարութեանդ ուշադրութեանը ներկայացնել։

Այլևայլ զեղծմանց և անկարգութեանց վրայ ժողովրդեան ստէպ ստէպ գանգատներէն կ'ստուգուի և և կը հաստատուի թէ՝ տեղ տեղ՝ մանաւանդ մայրաքաղաքէս հեռու և յարաբերութեան մասին դժուարութիւն ունեցող գաւառաց կայսերական պաշտօնեայք՝ վեհ. Սուլթանին կամաց և հրամանաց և երկրին օրինաց հակառակ ընթացքի մէջ են, որոնց թոյլտուութեամբը կամ անհոգութեամբը շատ անգամ կրօնական խտրութեանց և մոլեռանդութեանց աղետալի անցքեր կը պատահին. արքունի շինուածոց համար մարդիկ անկարեայի կը բռնուին. դրամական պահանջումներ կըլլան. ճանապարհաց շինութեան պատրուակաւ ժողովուրդը կը կեղեքուի. հպատակ ազգաց՝ մանաւանդ մեր ազգէն անջատեալ հայոց և մեր մէջ բաժանման և երկպառակութեան տարերքները կաճին. կանայք և անչափահաս մանկունք բռնի մահմեդականութեան դարձնելու ջանքեր կըլլան։ Դարձեալ՝ սոյն պաշտօնէից անհոգութեամբն արքունի տրոց բաշխման և հաւաքման մէջ զեղծումներ կը գործուին. ասկէր պետելի է տուրքը մեռնողի և գաղթողի կամ բոլորովին անյայտ եղողի բաժինն ալ մնացեալներէն կը պահանջուի, որով վճարումն անկարելի եղած պագայէներ մնալով կը ծանրանան այլևայլ գաւառաց մէջ։

Այսպէս նաև էմլագ և թէմէտտիւ տրոց մասին անարդար բաշխում և հաւաքում կըլլայ, որ բաղդատմամբ ոչ-մահմէտականաց վրայ աւելի ծանրացած է՝ քան թէ մահմէտականաց։ Վերջապէս տրոց հաւաքման պատրուակաւ աղքատին անհրաժեշտ կահկարասիքն ու գործիքը բռնի ծախելու և զանոնք բանտարկելու խստութիւններ ի գործ կը դրուին։

Իսկ Միւլթէզիմներու համար եղած գանգատներն ընդհանուր են։ Այս մասին գանգատները միաբերան կը հաստատեն թէ եղած զեղծումները՝ ա՛յն պէյերէն կամ կառավարութեան ժողովոց ա՛յն անդամներէն են, որոնք օրինաց հակառակ չը գործելու համար՝ իրենք վարձակալութիւն (իլթիզամ) չեն ըներ, այլ իրենց տղայքը կամ սպասաւորները կամ այլ ծանօթները։

Օրէնքին արգելքը բաւական է հասկցնել թէ՝ երբ այսպիսի չարաչար գործածութեան ճանապարհ մը գտնուած է, ժողովուրդն ի՛նչ ձեռքերու տակ կը մնայ, աղքատը ո՛րչափ անիրաւութեան տակ կը ճնշի զինքը հարստահարողէն։ Այս տեսակ Միւլթէզիմները գիտնան իսկ պիտի վնասին, չեն վախնար. զի վնասին հանելու միջոցներն ունին, աղքատը կեղեքելով և չափազանց գիներ դնելով անոնց բերքին վրայ։

Այսչափ ցորեն կամ բամբակ կուտայ այս արտը, այսչափ դրամ պիտի տաս կըսեն, (դրամ կ'առնուն և ոչ բերքին տեսակէն, և այն ալ, պզինձ դրամ չեն առնուր), եթէ բերքին տէրը դժկամակի տալ, միւլթէզիմն ալ աւելի կը հակառակի և բերքն երեսի վրայ կը թողու (զի մինչև տասանորդը չառնուի՝ բերքը իր շտեմարանը չը բարձուիր), որ կրնայ շատ վնասներու ենթակայ ըլլալ, ապա առաջի ուզած տասանորդին կըրկնապատիկը կը պահանջէ ու կ'առնու։

Տան պիտոյից համար տան պարտիզի մէջ ցանուած բերքին վրայ ալ տասանորդ կը պահանջուի։

Եթէ բերքին տեսակէն տասանորդ առնուի, նոյն իսկ բերքին տիրոջը բառնալ կուտան առնուած տասանորդը, և խեղճերն օրերով կը սպասեն պէյլիկ ամպարին դուռը, որ բերքը չափուի ու վերցուի։

Կը գանգատին նաև թէ միւլթէզիմները հնձոց ժամանակ չեն գար, շատ անգամ մինչև այն ատեն տասանորդը ծախուած չըլլալուն համար կառավարութեան կողմէ ալ մէկը չը գար, և այնպէս բերքն երեսի վրայ կը մնայ ու կը փթի, և հուսկ ուրեմն կուգան և այն վնասեալ ու փտեալ բերքերուն համար ողջի արժէքով դրամ կը պահանջեն։

Այս պարագային մէջ գեղապետաց օգնութեամբն

աղքատն ամեն տեսակ տառապանաց կենթարկւի, դատի կը քաշկռտւի, կը տրորւի, կը բանտարկւի։ Միւլթէզիմներու հետ գաղտնի ընկեր եղող պաշտօնեայք անոնց շահուն միայն կը ծառայեն, և խեղճ հողագործը ճարահատեալ՝ իր ունեցածը վրայ կուտայ, և տակաւին չկրնար միւլթէզիմին ձեռքէն ազատիլ։

Զմրան մօտ՝ և երբեմն ի մէջ ձմրան, միւլթէզիմներուն ի գիւղօրէս ելնելէն խիստ վնասակար արդիւնքներ յառաջ կուգան։ Գիւղացին պարտաւոր է ձրիաբար կերակրել միւլթէզիմն և անոր գործակալները, որչափ ժամանակ որ հիւր մնան իրենց գիւղը, անոնց հաւնեցնելու եղանակաւ, երբեմն ալ կը ծեծւին և երբեմն ալ կանանց պատիւ կարատաւորւի։

Վերջին տարիներս քանի մը գաւառներու մէջ հողագործաց եզանց լծերն ալ գրւեր և ի գլուխ մէկ լծոց երկու կոտ, այն է չորս լիտր ցորեն առնւեր է տասանորդ և կարի խստութեամբ, քանզի անոնք որ ցորեն չունէին, բռնադատւեր են դրամով գնել քաղաքացիներէն և վճարել։

Շահնալըք կամ էօլչէք հագգը ըսւած արգելեալ տուրք մ'ալ կայ, որ բերքին 1/16-ն է, երբեմն ալ աւելի, զոր հողագործը եթէ չը տայ՝ շահնան շատ վնասներ կը հասցնէ անոր։

Այս գանգատներն աւելի ծանր են այն գաւառաց մէջ, յորս պէյ կամ աղա կամ քիւրդ բռնաւորներ կան, և անոնք ալ կամ իշխանութեան մէջ են, և կամ իշխանութեան առջև ազդեցութիւն ունին։

Բարեխնամ կառավարութիւնդ արդէն տեղեակ ըլլալով գաւառաց խորերուն մէջ պատահած այսպիսի զեղծմանց, նոր և ազդու միջոցներ ձեռք առած է բարեկարգութեան հաստատութեանը և ժողովրդեան բարօրութեանը համար։ Եւ արդարև՝ ձեռք առնւած միջոցներուն մէջ ամենէն ընտիրը կը համարւի այն դրութիւնը՝ որ քօնթրօլ մ'է տեղական կառավարութեանց դէմ, որ յատուկ ժուռնալճիներու ձեռօք կատարել կը փորձւի առաջին անգամ։ Այս դրութիւնն իր օգուտները պիտի մատակարարէ կառավարութեան և երկրին ժողովրդեան։ Միայն թէ այս քննչութիւնը օգտակար ըլլալու համար հարկ է որ ժողովուրդն անվախ ըլլայ իր ցաւերն անկեղծութեամբ խօսելու. և այս անվախութիւնն ալ կառավարութեան ձեռք առած և առնելիք միջոցներէն կրնայ գոյանալ, երբ յանցաւոր ո՛և է գաւառական պաշտօնեան անմիջապէս պաշտօնէ ձգւի և պատժւի, իսպառ մերժելով զայն ի պաշտօնէ։ Այս անդրդւելի կամքը վերջին անգամ փորձով տեսնւելով, մեծ յոյս կուտայ կայսերական կառավարութեանդ բոլոր հաւատարիմ ժողովրդեան թէ հետզհետէ մեծամեծ բարիք վայելելու և իրենց ցաւերը մոռնալու արժանի պիտի ըլլան, շնորհիւ Վեհ. կայսեր և անոր արժանընտիր պաշտօնէութեան։

Այս մասին բարեխնամ կառավարութեանդ ունեցած հայրական բարի դիտաւորութեանց ճշտիւ գործադրութեան հսկելու համար մեծապէս կրնան նպաստել նաև մեր Ազգին գաւառական վարչութիւնները և անոնց առաջնորդները, որոնց գանգատները թէ՛ ուղղակի տեղական կառավարութեան և թէ Պատրիարքարանիս թագրիրներուն միջոցաւ բարեխնամ կառավարութեանդ ներկայացած են և կը ներկայանան միշտ։

Սակայն ասկէ յառաջ գործածւած իսթիլամ-ի եղանակը մեծապէս աննպաստ էր ժողովրդին ցաւոց դարման ըլլալու մասին, վասնզի՝ յայտնի կերևէր թէ ժողովուրդը որչափ վախ ունէր տեղական կառավարութեանց վրայ գանգատելէ, կամ թէ որ գանգատէր, իսթիլամի մէջ յետս կոչելու, կամ սխալ տեղեկութիւն հաղորդելու կը պարտաւորէր, զի իսթիլամը բուն իսկ ա՛յն կառավարութենէն կըլլար, որմէ էր ժողովրդեան գանգատը։ Այս աննպատեհ եղանակը՝ որ այժմ ժուռնալճիներու դրութեան հաստատութեամբը բարձւած կը յուսացւի, ոչ միայն տեղական կառավարութեանց վատթարանալուն կը ծառայէր, այլ շատ անգամ արգելք իսկ կըլլար ա՛յն տեղական կառավարութեանց՝ որ ժողովուրդն աղէկ հոգալու և աղքատը պաշտպանելու ջանք կուզէր ցուցնել։ Այս արգելքն յարուցանողներն եղած են միշտ իւրաքանչիւր գաւառի համար տեղացի բնիկ մեծատունք, որոնց զօրութենէն ազատ կամ զերծ՝ կառավարութեան գլուխ մը կամ այլ պաշտօնեայ թերևս եղած չէ, կամ թէ որ եղած ալ է նէ, շուտ հասած է անոր անկումը տեղացի բնիկ մեծատանց միաբանութեամբը. վասն զի՝ կառավարութեան պաշտօնէից համար աղէկ կամ գէշ վկայութիւն տւողներն իրենք եղած են միշտ։ Որչափ որ այս բնիկ մեծատանց ազդեցութիւնը չափաւորւած կը համարւի գաւառական կառավարութեանց թէշքիլաթի եղանակաւը, դարձեալ այդ ընտրութեան եղանակը հիմնապէս անոնց կը ծառայէ. Թէֆրիք Մէճլիսին կը բաղկանայ Միւթէսարրըֆէ, Հաքիմ էֆէնտիէ, Թահրիրաթ միւտիրիէ և ոչ-մահմետական ժողովրդեան գլուխներէ, որոնք ուզածնին ընտրելեաց ցանկը կրնան անցնել. և այս ցանկն ալ փակեալ ըլլալով, կառավարութեան պաշտօնէից խորհրդակցութիւնը սահմանեալ մարդոց առանձնաշնորհութիւնն եղած է միշտ և կը մնայ այնպէս։ Օրինաց այս տրամադրութենէն տեղացի բնիկ մեծատանց շատ օգուտ չը քաղելու միջոցը բարեխնամ կառավարութեանդ բարձր հոգածութեանց արժանի նիւթ մ'է, և այս առթիւ Պատրիարքարանս սա խնդիրը միայն կը համարձակի աւելցնել թէ Թէֆրիք Մէճլիսիին պատրաստած ընտրելեաց ցանկն աւելի ընդարձակութեան կարօտ է. կամ Թէֆրիք Մեճլիսիին կազմութիւնն աւելի ժողովրդեան և աղքատին նպաստաւոր եղանակի մը վերածել պէտք է. և ինչպէս Առաջնորդաց ներկայութիւնն հարկաւոր է, նոյնպէս առանց անոնց ներկայութեան կամ հաւանութեան՝ ընտրելեաց ցանկ չը պատրաստւի, և իւրաքանչիւր ազգի ընտրելիներն ալ կանխաւ ազգային ներքին ժողովոց խորհրդակցութեամբը պատրաստւած ըլլան։

Փորձը կապացուցանէ թէ ձեռք առնւած ազդու միջոցներէն ամենէն աւելի զօրաւորն արդարութեան ճշտիւ կիրառութիւնն է, և պիտի ըլլայ միշտ. երբ կառավարութիւնդ կը քննէ, կը դարմանէ և ապագային ապահովութեան համար կը պատժէ, տարակոյս չը կայ թէ բաղձացած նպատակին պիտի հասնի։ Ուստի երբ գաւառաց մէջ առաջնորդները որևիցէ զեղծման մը վրայ բողոք կամ գանգատ ունենան տեղական կառավարութեան, և այն ուշադրութեան առնւի, և կամ եթէ Պատրիարքարանս գանգատ կամ բողոք ունենայ

առ Բ. Դուռն, թէ՛ կառավարութեանդ և թէ Պատրիարքարանիս կողմէն լիազօր քննիչներով քննութիւն ըլլայ, կամ ինչարկին քննութիւնը ի Պոլիս փոխադրուի, մեծ և իրական արդիւնք ձեռք բերել հնար պիտի ըլլայ, այսպիսի ազդու միջոցներով: Մանաւանդ պէտք է որ Բ. Դրան հրամանագրերն վիլայէթի պաշտօնական լրագրաց միջոցաւ հաղորդուին ի տեղեկութիւն ժողովրդեան, որպէս զի շատ անգամ անգործադրելի մնալու և կամ թերի գործադրուելու վիճակէ զերծ ըլլան. և հպատակ ազգաց գլուխները և նոյնիսկ այն ժուռնալճիները, որոնց պաշտօն տրուած է Բ. Դրան հրամանագրերուն գործադրութեան վիճակը քննել ժողովրդական աղբիւրներէ, կարող ըլլան անոնց վրայ հսկելու և անոնց գործադրութիւնը պահանջելու: Այսպէս նաև հարկ է Տիւսթուրըն ալ ամեն ազգաց լեզուին վերածել թարգմանութեամբ: Ռամիկ և տգէտ մարդոց մէջ կրօնական խտրութեան առիթներով ծագած գժտութեանց մէկ գլխաւոր առարկային նուազման ոչ սակաւ պիտի նպաստէ, եթէ օրէնքը կրօնափոխութեան դիմողներու համար որոշ տրամադրութիւններ պարունակէ, մանաւանդ կնիկ մարդոց համար. ան ատեն այս մասին եղած բազմադիմի գանգատները վերջ կը գտնեն, և կրօնափոխն իր ազատ համոզմանը տէր կըլլայ՝ որ արդէն բարեխնամ Կառավարութեանդ ընդունած ազատ սկզբունքներէն մէկն է:

Այսպէս օրէնքի մը հարկաւորութիւնը կը նկատուի, կրօնափոխ արանց իրենց կնոջ և զաւակացը նափագա մը վճարելու մասին:

Եթէ բարեխնամ Կառավարութիւնդ ազդու միջոցներով գաւառական կառավարութեան պաշտօնեաները հսկողութեան ներքև առնու, այն ատեն արդարութիւնը բարձր ի գլուխ պիտի պանծայ, և անով շատ մը գանգատներու աղբիւրը պիտի չորանայ. արքունի տուրք նկատմամբ եղած զեղծմունք պիտի բարձուին. տուրք բաշխումն և հաւաքումը արդարութեան վրայ հիմնել կարելի պիտի ըլլայ, և մանաւանդ երկիրը պիտի ազատի միւլթէզիմներու երեսէն, որ այսօր հոգեվարք վիճակի հասած է. բարեխնամ Կառավարութեանդ շնորհիւ պիտի սկսի նոր կենդանութիւն զգենուլ այս մայր արուեստը՝ որ Արևելցւոց միակ արուեստ մնացած է, և բնութիւնն ալ զայն զարգացնելու միջոցներով օժտած: Այս մասին մեծապէս պիտի նըպաստէ անվճարելի պագայէներուն և հողագործներուն ուրիշ կարևոր ապահովութիւններու շնորհումը, որ բարեխնամ Կառավարութեանդ ձեռնհասութեանը կը պատկանի:

Ուրիշ դժբախտութիւն մ'ալ կայ որ ոչ նուազ ցաւալի հետևանքներ ունեցած է և կունենայ միշտ. այն է՝ ոչ-մահմետականաց վկայութեան չը բռնուիլը: Աւելորդ է ըսել թէ այս պատճառաւ ո՛րչափ առևանգութիւնք, յափշտակութիւնք, գողութիւնք, նա մանաւանդ սպանութիւնք անպատիժ մնացած են կամ անյայտ, նոյնիսկ կառավարութեան ջանիցն հակառակ. տարակոյս չը կայ որ եթէ բարեկարգութեան Հրովարտակին տրամադրութեանց համաձայն՝ կալուածական, առևտրական և ոճրագործական դատերն անպատճառ (հէր հալտէ) նիզամի ատեաններու մէջ քննուին, բարեկարգութեան հաստատութեանը, հարստահարութեանց և շատ տեսակ զրկանաց բարձման ծառայելէ զատ, հաւասարութիւն ըսուած սկզբունքը պիտի իրականացնէ: Դարձեալ ամենացաւալի հարկի մը մէջ կը գտնուինք գանգատելու քիւրդերու և այն լեռնցի ցեղերու դէմ՝ որոնք վրանաբնակ ըլլալով՝ ամեն ազգաց մանաւանդ կառավարութեան գանձուն ալ մեծապէս վնասակար են: Ասոնք զէնք կը կրեն, կառավարութեան ոչ տուրք կուտան ոչ ալ զինուոր, և ապստամբ են, մինչդեռ միւս ժողովուրդներն անզէն են և կառավարութեան տուրք և զինուոր կամ պէտէլ կուտան, աւելի տուրք մ'ալ այդ ապստամբներուն տալու պարտաւորութեամբ: Այս հարստահարութեանց ներքև առաւել կը գտնուին Էրզրումի և Տիարպէքիրի վիլայէթները, և անոնց մէջ Մուշ, Վան, Քղի, Ղուզուլջան, Դերջան, Բաղէշ, Զարսանճագ, Սղերտ և այլն:

Կայսերական բարեխնամ Կառավարութիւնդ արդէն հրատարակեալ Խաթթը Հիւմայուններով ժողովրդեան կենաց, ընչից և պատուոյ ապահովութեան պիտոյքը ճանչցած է, որ ըստ այնմ երկիրը բարգաւաճի և զարգանայ, նակայն ցաւօք սրտի կը տեսնուի որ գաւառաց, մանաւանդ վերոյիշեալ գաւառաց ժողովուրդը քիւրդ և այլ լեռնցի ցեղերու աւազակութեանց և յափշտակութեանց և սպանութեանցն ենթակայ եղած է: Ժողովուրդն այսպիսի կեղեքմանց ներքև անհնար է որ կարող ըլլայ աշխատիլ, աշխատիլ այնպէս՝ ինչպէս որ երկրին բարգաւաճումը կը պահանջէ:

„Երկրի մը յառաջադիմութեանը և հարստութեանը միջոց ժողովրդեան աշխատութիւնն է“, ինչպէս որ բարեխնամ Կառավարութիւնդ ժուռնալճիներու հրահանգին մէջ նշանակած էր. „ամեն յառաջադիմութեան հիմն եղող աշխատութիւնն ալ այն ատեն կարելի է, երբ աշխատողն իր աշխատութեանց արգասիքը կատարեալ ապահովութեամբ վայելելու վստահ ըլլայ. մարդս բնականաբար իր վիճակը բարեկարգելու և իր հայրենեաց բարօրութիւնը փընտռելու անընդհատ միտում ունի, մարդուս այս բնական միտումն այն ատեն կեղծանի, երբ տեսնէ որ իր աշխատութենէն իրմէ աւելի ուրիշներն օգուտ կը քաղեն“: Վասն որոյ երկրին յառաջադիմութեանը և հարստութեանն արգելք եղող այս քիւրդերուն և այլ լեռնցի ցեղերուն և տէրէպէյիներուն մասին ըլլալիք քննութիւնները դիւրացնելու համար Պատրիարքարանս կը փութայ ծանուցանել թէ, արդէն Պատրիարքարանս մանրամասն ցուցակն ունի այդ ապստամբ անձանց գըլխաւորներուն և այլ պաշտօնէից ոմանց, և 20 տարի հետէ անոնց երեսէն ժողովրդեան կրած տառապանաց և չարչարանաց սոսկալի նկարագիրներովն իր դիւանը լի է, ո՛ր ատեն բարեխնամ Կառավարութիւնդ բարեհաճի ուզել, պատրաստ է տալու թէ՛ անուններն և թէ գործոց նկարագիրները:

Մինչ ցարդ Պատրիարքարանիս այս մասին մատուցած խնդրագիրներն ըստ մեծի մասին անգործադրելի մնացած են, վասն զի ձեռք առնուած միջոցներն անբաւական եղած են: Բարեխնամ Կառավարութիւնդ անգամ մը Մշոյ սահմանակից քրդաց գլխաւորները ձերբակալելով՝ նոյն երկրէն հեռացոյց, և ասով ժողովրդեան աշխատութեանը մեծ դիւրութիւն ընծայեց. սակայն այդ աքսորեալ գլխաւորներէն ոմանք սկսան վերադառնալ նոյն երկիրը, որով աւելի ևս կենդանացաւ և գրգռեցաւ ասոնց բարբարոսութիւնը:

Այս դառն վիճակէն ազատելու հնարը բարեխնամ կառավարութեանդ ձեռք առնելիք ազդու միջոցներէն կախումն ունի միայն, երբ այդ քիւրդ և այլ լեռնցի վրանաբնակ ցեղերու թօռունները հնազանդութեան ներքև առնուին որևէ եղանակաւ, և իրենց իշխանութեան ներքև գտնուող հասարակ քիւրդերու և այլ ցեղերուն ձեռքէն զէնքն առնուի և գիւղաբնակ ժողովրդոց կարգը դասուին, մաճ կամ հովուական ցուպ տրուի անոնց ձեռքը փոխանակ զինուց։ Իւ տարակոյս չը կայ թէ բարեխնամ կառավարութիւնդ իր այս բարերար կամացը գործակից ըլլալու պատրաստ պիտի գտնէ նաև տառապեալ տեղացի բնիկ ժողովուրդը, մանաւանդ մեր հաւատարիմ ազգը, ինչպէս որ ուրիշ տէրէպէյիներ կամ լեռնցի բռնաւորներ նուաճելու միջոցին մերայնոց ծառայութիւնն ապացուցեալ է։

Կամ մեր ազգայինները շարունակ հարստահարող քրդաց ձեռքէն զէնքն առնուի, կամ՝ իրենց կեանքը, պատիւը և ինչքը հարստահարողներու դէմ ինքզինքնին պաշտպանելու վիճակի մէջ դրուին։ Յուսալի է թէ բարեխնամ կառավարութիւնդ այնպիսի վերջին տնօրինութիւն մը ձեռք կառնու, կայսերական բանակին քաջութիւնը անմիջապէս քրդաց դէմ բանեցնելով և հարստահարեալ գաւառաց մէջ զօրաւոր ոստիկանութիւն մը հաստատելով, ինչպէս որ Ռումէլիի մէջ սովորութիւն եղած է, մեր ազգայիններն ոստիկանութեան մեծ ու պզտիկ պաշտօնեաներուն մէջ ընդունելով. այսպիսի կենսական պարագայից մէջ միայն՝ հաւատարմութեան սկզբունքը ժողովրդեան աչաց առջև կըրնայ իրականանալ։

Ինչպէս հարազատ որդի մը իր վիշտերը կը յայտնէ իր հօրը և օգնութիւն ու դարման կը խնդրէ, նոյնպէս և մեք մեր ազգին ցաւերը մեր առատագութ Սուլթանին բարձր և հայրական կառավարութեանը ներկայացնելով, անմիջական և ազդու դարմաններ կը խնդրեմք։ Բնական է որ մեծ ցաւերը մեծ դարմաններու կը կարօտին։

Պատրիարք Կ. Պոլսոյ

ՄԿՐՏԻՉ ԱՐՔԵՊ. ԽՐԻՄԵԱՆ

(Կնիք)

Թ Ե Ր Թ Օ Ն

ԿԵՆԴԱՆԻ ԹԱՂՒԱԾՆԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ

(Թիւրքական բանտեր)

III

Ընդհանուր ներումներ. Խաղեր արտաքին աշխարհի հանդէպ. Հարցաքննութեան շողոքորթող սիստեմը. Խոստովանողները. Մի բնորոշ օրինակ. Գաղտնապահութի՞ւն։

—

Երբ հարիւր հազար հայերի արեան գնով սուլթանը ընկճեց հայկական շարժումը և անցած կարծելով հայկական ավտօնօմիայի սպառնացող ուրւականը, որպէս զիջում դիւանագիտական պահանջների, ընդհանուր ներումներ շնորհեց հայ քաղաքական բանտարկեալներին։ Հազարաւոր հայեր ազատութիւն ստացան։ Բայց դա շատ կարճատև եղաւ։ Հազիւ մի ամիս բանտերը թափուր մնացին քաղաքական բանտարկեալներից։ Թիւրք պաշտօնեաները՝ Պոլսից եկած հրամանի համաձայն՝ մի ձեռքով ազատածները՝ միւս ձեռքով ժողովել սկսեցին։ Բանտերի դռները նորից բացուեցան և նորից հատ-հատ, խումբ-խումբ սկսեցին գալ սուլթանի անհաւատարիմները։

Վերջին ընդհանուր ներումը 1897 թուի գարնանն էր, մարտ ամսին։ Նոյն թուի ապրիլի 7-ին Մարաշի բանտում 32 հայ քաղաքական յանցաւորներ կային՝ Զէյթունից և նրա շրջանից, Ալպիստանից ու Մալաթիայից։ 22 օր միայն բանտը պարապ մնաց հայերից։ Նոյն դրութեան մէջ էին բոլոր հայաբնակ քաղաքները։ Դրանից յետոյ ընդհանուր ներումն այլևս չ'եղաւ, որովհետև սուլթանը տեսաւ, որ ազատութեան կրակը դեռ չէ հանգած հայկական լեռներում, բայց դրսի աշխարհին խաբելու համար նա մի-երկու անգամ 1900—1901 թւերին մասնակի ներումներ տուեց այնպիսի վայրերում, ուր վտանգը մօտալուտ չէր և այն էլ՝ միևնոյն շրջանի հատ-հատ քաղաքներում և ոչ բոլոր բանտարկեալների համար։ Թիւրք քաղաքականութիւնը գիտէ լաւ բնութիւն անել նման պարագաներում։ Բաւական է, որ Պոլսի թերթերը յայտարարեն. „Շնորհիւ վեհ սուլթանի՝ Էրզրումի, Վանի, Բիթլիսի նահանգներում բազմաթիւ հայ քաղաքական բանտարկեալներ ազատ արձակեցան", իսկ այդ լուրը հեռագրներով եւրոպական մամուլին հասնելով՝ հանգստացնէին հայկական խնդրով շահագրգռուած դիւանագէտներին։ Խաղը շատ լաւ էր սարքուած՝ Թիւրքիայից դուրս թող փչելու, իսկ ներսը խեղդելու ամեն մի ձայն, ամեն մի ճիգ։

Սակայն բոլոր փորձերը զուր են անցնում։ Հայկական ազատութեան միտքը նորից ծայր է տալիս, թիւրքը շփոթւում է, ինչ անելը չը գիտէ. միակ միջոցը բանտն է և նա յարատևում է անվերջ։ Օսմանեան կառավարութեան պաշտօնեաները հասկանալ չեն կարողանում, թէ այս ինչ տեսակ ցեղ է, որ ոչ խրատն է ըմբռնում, ոչ պատիժն զգում, ոչ էլ կոտորելով՝ անյայտանում աշխարհի երեսից։

— Նէ արօրգ միլլէթէ չաթօրք, այքան ջարդեցինք, այքան տանջեցինք, նորից մեր բանտերը լցւում են դրանցով, գոռում է Ալայ-բէյը կամ բինբաշին և հրամայում բանտային պաշտօնեաներին աչալուրջ լինել, որ նոր եկածները միմեանց հետ չը տեսնուին և ոչ ոքի հետ յարաբերութիւն չ'ունենան, մինչև քննութիւնների վերջանալը։

Այժմ վերաբերմունքը տարբեր է։ Թէ՛ թիւրք ամբոխը և թէ պաշտօնեաները վարժուել են լսել, որ հայը բողոքում է, դժգոհ է, որ հէնց դրա համար էլ պիտի բանտարկուի, պատժուի օրէնքով. բաւական է, որ նա ակտիվ գործի մէջ չէ եղել, այլ յանցաւոր է մի խղթի, մի նամակի, մի երգի պատճառով. ճիշտ է, նա նորից խ ա յ ի ն է, բայց նրան մինչև մահուան դուռը հասցնելու կարիք չի զգացւում։ Սարսափը համատարած չէ։ „Յեղափոխութիւնը ջախջախուած է", մի քանի պ ա ր ո ն ն ե ր* են միայն, որոնց հետ խորամանկութեամբ, կեղծաւորութեամբ վարուելով կարելի է խնդիրը հասկանալ, չարիքի առաջն առնել։

—„Կուզում, օղլում,—այսպէս է սկսում քաղցրախօս բինբաշին կամ կօմիսէրը, դու երիտասարդ ես, չը գիտես օգուտդ. դու անմեղ ես։ Քեզ բերել ենք միայն հարց ու փորձի համար։ Մի՛ վախենար, հէնց վաղը բաց կը թողնենք։ Բայց հարկաւոր է, որ ամեն ինչ ճշտութեամբ պատմես. դու այս գործում վկայ կը ներկայանաս, քո ցուցմունքը կը տաս և կը թողնես գործիդ կ'երթաս։ Մեսրոպը ամեն բան յայտնեց, նա ասաց որ դու էլ գիտես այդ բոլորը. ինչո՞ւ ես թագցնում, դու էլ պատմիր, ինչ գիտես նրա մասին։ Գիտենք, որ նա է ամեն բան անողը, առանց քո վկայութեան էլ նա արդէն մեղաւոր է. բայց ես քո մասին եմ մտածում, չեմ ուզում, որ դու էլ պատժուիս. գիտցած եղիր, լռութիւնը յանցանքի նշան է։ Եթէ միշտ ասես „չը գիտեմ, ես տեղեկութիւն չ'ունեմ", դու իբրև յանցաւոր որ փադիշահին հարկաւոր եղած տեղեկութիւնները զլանում ես յայտնել, կը դատապարտուես։ Ես ասում եմ քեզ ամեն ինչ, որ լաւ կշռես քո չարն ու բարին. ու-

---

* Թիւրքիայի մի քանի տեղերում. ի միջի այլոց ամբողջ Կիլիկիայում, հայ յեղափոխականներին ընդհանուր անունով Պ ա ր ո ն են անւանում։

զո՞ւմ ես ազատւել ու տուն երթալ, արա, ինչպէս ես եմ ասում“:

Այս սովորական խորամանկ քարոզներն են, որ գործ են դրւում ամէն տեղ և դրանցով էլ շատ շատերին թակարդ ձգւում: Բաւական է, որ խնդրի ծայրը դուրս եկաւ, այլևս պրծնումն չը կայ: Որքան շատ խօսեց, որքան շատ տեղեկութիւններ տւեց, այնքան էլ շատ է յանցանքը, այնքան էլ „շատ տարիներ կը հագցնեն նրան“: 101 տարին սովորական է, երբ մէկը իր բերանով խոստովանի իր մի անմեղ քայլը, օրինակ յեղափոխական մի երկու բառ պարունակող նամակ ստանալն ու մի ուրիշին յանձնելը. Զղջումը վերջըն է լինում, բայց արդէն ուշ է: Վերջն է, որ թակարդ ընկածը գլխին ու ծնկներին է տալիս, բայց այդ ոչնչով չէ օգնում:

Եթէ դիմացինը տատանւող է, փորձում են խաբել այլ միջոցներով: Իսկոյն պատւիրում են լաւ սենեակում հիւրասիրել, փափուկ անկողին տալ, փաշայի տնից կերակուր տանել, եթէ դրամ է ուզում, այդ էլ չը խնայել: Եւ այդ ձևով շատ շատերին են կարողանում խօսեցնել տալ, նոյն իսկ իր ընկերների մ ա տ ն ի չ ը դարձնել: Եւ մինչդեռ թշւառականը այդ զոհողութիւններն յանձն է առնում միայն իր կաշին ազատելու յոյսով, թէկուզ դրա համար ծախած լինի իր գաղափարական ամբողջ կեանքը, վերջը դուրս է գալիս, որ նա ոչ միայն մատնիչի սև անունն է ժառանգում, այլ և հակառակ իր երազների, դատապարտւում է և պատժւում ամենածանր կերպով: Մի մարդ, որին ոչ ոք երեսս չի տալիս, որի հետ ոչ ոք խօսել չի ուզում, մի մարդ, որ կրում է իր մեծ յանցանքի պատիժը—իբրև դ ա ւ ա ճ ա ն իր ընկերների, իբրև ո ւ ր ա ց ո ղ իր թերևս մի ժամանակ փայփայած գաղափարների:

Մի բնորոշ օրինակ:

Տիգրան անունով մի երիտասարդ, 1899 թւի յունիսի սկզբին, ձերբակալւում է Ալէքսանդրէտում՝ արտասահմանից մի նամակ ստանալու և Զէյթուն ուղարկելու մեղադրանքով: Մարաշ փոխադրւելով, ենթարկւում է քննութեան հէնց այն ժամանակւայ միւթէսարրֆ՝ Կարա-Մուրատ Զադէ փաշայի կողմից: Փաշայի կեղծաւոր, նենգ ու քաղաքավարի վերաբերմունքը և ամեն տեսակ դիւրութիւններ ու խոստումներ տալը այնքան են քաջալերում և յուսադրում անհեռատես կալանաւորին, որ նա ոչ միայն յայտնում է նամակի ինչ լինելը, ուրտեղից գալը, ում ուղարկելը և որոնց ձեռքով փոխադրւելը, այլ և իր կաշին փրկելու յոյսով՝ աւելացնում է այնպիսի տեղեկութիւններ, որոնցով թիւրք կառավարութիւնը անպատճառ պիտի շահագրգռւէր: Նա յայտնում է, որ նամակի մէջ ակնարկւած անձնաւորութիւնները ռուսահայեր են, որոնք եկել են յատկապէս ուսումնասիրելու Կիլիկիայի դիրքերը և ժողովրդի ռազմական կարողութիւնը, որպէսզի տեղեկագիր ներկայացնեն Կովկասում գոյութիւն ունեցող յեղափոխական մարմնին, որի որոշման համեմատ՝ հարկաւոր եղած զէնք, մթերք ու պաշար պիտի մտնի Կիլիկիա, հայ ժողովուրդը ապստամբեցնելու համար թիւրք կառավարութեան դէմ: Նա յայտնում է, որ յիշած բոլոր ռուսահայերը ապրում են Թիւրքիայում իբրև ոչ-հայեր: Եւ որպէս ապացոյց իր ասածների՝ նա մատնացոյց է անում մի Բօլգար, անունը Դիմիտրի Մարինով-Պօպով, որ հէնց այդ միջոցին „գրամօֆօն“ գործիքով իր օրապահիկն է վաստակելիս եղել Այնթապում և մի Վրացի, անունը Արտեմ Խադիկով, որ ռուսական ապրանքներ է ծախելիս եղել Ալէքսանդրէտում:

Կասկածամիտ կառավարութիւնն էլ հէնց առիթ էր փնտրում՝ Կիլիկիայում ձերբակալութիւններ սկսելու համար: Իսկոյն գրքեր են ուղարկւում Մարաշից, Սիսից և Հաճընից՝ բռնելու Զէյթունի գլխաւոր անցքերը: Ճանապարհորդները բոլորն էլ քննութեան են ենթարկւում: Սկսւում է ամբողջ մի քաղաքական հալածանք: Հեռագրով Ալէքսանդրէտից պահանջւում է Խադիկովը, որ բարեբախտաբար արդէն մեկնած է լինում: Այդ հանգամանքը աւելի խորհրդաւոր է դարձնում գործը: Հեռագրով ձերբակալել են տալիս և Բօլգար Դիմիտրիին Այնթապում: Մինչև այդ ժամանակ արդէն ձերբակալւած են լինում յիշած նամակը Ալէքսանդրէտից Զէյթուն փոխադրող կամ նրա հետ առնչութիւն ունեցող 7 հայեր և մի քիւրդ: Դիմիտրիի մօտ ոչինչ չեն գտնում. Նա ինքը կասկածելի լինելու ոչ մի նշան չի ունենում: Կառավարութիւնը համոզւում է, որ այդ ամբողջ պատմութիւնը յերիւրանք է, բայց ի՞նչպէս դիւրութեամբ բաց թողնել մարդկանց, որոնք որչափ անմեղ են, նոյնչափ էլ կասկածելի կարող են լինել: Ի՞նչպէս է լինում, որ Տիգրանը գիտէ այդ Բօլգարի գոյութեան մասին, եթէ սա որևէ կապ չէ ունեցել հայերի հետ: „Այստեղ երևի մի բան կայ“ մտածում է թիւրքական „արդարադատ“ դատարանը և իբրև արդիւնք իր ենթադրութիւնների, դատապարտում է Դիմիտրիին 5 տարւայ բանտարկութեան: Եթէ նա հայ ճանաչւէր, և ուրեմն Տիգրանի ամբաստանութիւնը ճիշտ դուրս գար, անպատճառ մահւան կը դատապարտւէր *: Վրացի Խադիկովը ի բացակայութեան դատապարտւեց մահւան. նրա մասին կասկած է մնում, թէ թերևս հայ էր, ուրեմն և արժանի այդ պատժին: (Թիւրք դատարանները մահւան են դատապարտում բոլոր այն քաղաքական ամբաստանեալներին, որոնք իր ձեռքը չեն անցնում, ենթադրելով որ փ ա խ ո ւ ս տ ն արդէն ապացոյց է յանցանքի): Ձերբակալւածներից միայն մարաշցի Կարա-Գեաւուրեան Արթինն ու իր հովիւ՝ քիւրդ Օկեաշն ազատւեցին, և այն՝ 150 ոսկի կաշառքով: Միւսները՝ Զոք-Մարզւանցի Պօղոս Թիլլեան, մարաշցիներ՝ Նազարէթ, իր հօրեղբօր որդի Ջուբեյան Մկրտիչ և մազգործ Սարգիս Առաքելեան (սա նոյնպէս թակարդն ընկնելով փաշայի խոստումներից, ամբաստանել էր վերը յիշած Պօղոս Թիլլեանին, որ բոլորովին կապ չէ ունեցել նամակի խնդրի հետ), դատապարտւեցան 5-ական տարւայ և Ջորեյան Գուլիթ մի տարւայ բանտարկութեան: Իսկ ամբողջ դէպքի տխուր հ ե ր ո ս ը՝ Տիգրան դատապարտւեց մահւան: Բոլոր դատապարտւածները այժմ ազատ են բացի այն թուլամորթ արարածից, որ երազում էր ուրիշներին, նոյնիսկ օտարականներին, կառավարութեան յանձնելով՝ փրկել իր կաշին:

Եւ դա է ու կը լինի վիճակը այն բոլոր տխմարների, որոնք խաբւած կառավարութեան նենգ խոստումներից, կը փորձեն իրենց փրկութիւնն ու շահը ուրիշների կորստի մէջ որոնել...

Գ ա ղ տ ն ա պ ա հ ո ւ թ ի՜ ւ ն մինչև վերջին շունչ և ոչ երբէք խոստովանութիւն: Այս պիտի լինի նշանաբանը բոլոր քաղաքական կալանաւորների, հաւատամքը ամեն մի յեղափոխական ձերբակալւածի: Ոչ մի զիջում, ո՛չ սպառնալիքների և ոչ խոստումների դիմաց: Այդ է պահանջում թէ՛ գործի և թէ՛ նոյնիսկ բանտարկեալի շահը:

ՄԱՐ

ԱՄՍԱԼՈՒՐԵՐ

Վերջին հեռագիրները՝ ուղղած եւրոպական մամուլին, յունիսի 23-ից. „Շուշու շրջակայքում զօրքը ռմբակոծում է գիւղերը:—Բալախանի և Բիբի-Էյբաթ յայտարարւեց գործադուլ: Գործադուլ սկսեց Քութայիսի երկաթուղային գծի վրայ:—Թիֆլիսում անապահովութիւնը կատարեալ է“:

—

Մայիս 10-ին Էջմիածնում լոյս տեսաւ Կաթողիկոսական մի կարևոր կոնդակը, ուղղած բոլոր ռուսահայերին, հետևեալ բովանդակութեամբ.

„Հայրապետական գահ բարձրանալու առաջին իսկ օրե-

* 5 տարին լրացնելուց յետոյ էլ այդ օտարականը չի ազատւում բանտային կեանքից: Հինգ-վեց ամիս եւս ձգձգում եւ պահում են նրան զանազան բանտերում—Մարաշ, Այնթապ, Քիլիս, Հալէպ, Ալէքսանդրէտ եւ այնտեղից ոստիկանական հսկողութեամբ ուղարկում Կ. Պոլիս: Բարեբախտաբար, թիւրքական նաւեր չը լինելու պատճառով, նա ուղարկւում է աւստրիական նաւով: Նաւի մէջ նա կարողանում է նաւապետին հասկացնել իր դրութիւնը եւ նաւից չի դուրս գալիս: Թիւրք կառավարութիւնը պահանջում է աւստրիական դեսպանից. սա էլ խնդիրը հասկանալով, վճռում է չը յանձնել: Այսպիսով պատահմամբ միայն՝ օտար մի նաւի ապաստանելով՝ բանտարկեալը ազատւում է:

րից՝ Մենք փափագում էինք վերականգնել Հայաստանեայց եկեղեցու դարերի ընթացքում սրբութեամբ պահպանուած իրաւունքը՝ պաշտօնեաների վերաբերմամբ, սակայն ժամանակի ձախորդ հանգամանքները արգելք հանդիսացան Մեր այդ մտադրութեան իրականացմանը և մեր իղձը ամբողջ 13 տարի մնաց անկատար։ Այժմ, որպէս Հայրապետ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու և ամենամեծ պատասխանատու նրա ցանկալի բարգաւաճման և ծաղկեալ վիճակի թէ Մեզ ընտրող հայ ազգի և թէ՝ Աստծոյ առաջ, հասած ենք համարում ժամանակը և հասուն Մեր ժողովուրդը, ուստի Մեր այս Հայրապետական կոնդակով վերականգնելով Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու դարերով սրբագործուած իրաւունքը՝ քեզ ենք տալիս, ժողովուրդ Հայոց, թեմական առաջնորդների, յաջորդների, գործակալների և հոգևոր վարչական հաստատութեանց պաշտօնեաների ընտրութեան իրաւունքները, որից յետոյ ընտրեալները կը հրաւիրուին իրենց պաշտօնին պետութեան կողմից սահմանուած օրինական ճանապարհով։ Ի նկատի առնելով հայ ազգաբնակութեան վերաբերեալ վիճակագրական ճշգրիտ տեղեկութիւնների թերութիւնը, առայժմ՝ մինչև նրանց վերստուգումը և հայ ժողովրդից ընտրեալ պատգամաւորների ժողովով հաստատուն կանոնադրութեան մշակումը, կարգադրում ենք ընտրութիւնները կատարել կաթուղիկոսական ընտրութեան եղանակով ընդհանուր և անմիջական ձայնատւութեամբ“։

—

Հաճոյքով իմացանք, որ Սասունի յայտնի գործիչ Մ ո ւ ր ա դ, որ 12 տարուց ի վեր աքսորուած էր Աֆրիկեան Տրիպոլի, կարողացել է ազատուել և այժմ գտնւում է Պարիզ։ Ցաւում ենք մեր բերկրանքը և լիայոյս ենք, որ անւանի յեղափոխականը վերստին եռանդով կը նուիրուի ժողովրդական ազատութեան գործին, որ այնքա՜ն կարօտ է կարող և շիտակ մշակների։

—

Մեզ հաղորդում են, որ Պարիզում կազմակերպուած է մի նոր մարմին՝ „Ֆրանկո-Հայկական կոմիտէ“ անունով, որը նպատակ ունի ծառայել հայոց դատին։

—

Յունիսի 15-ին Ժընևի „Կազինո դը Սէնպիէր“ դահլիճում, բազմամարդ մի ժողովի առաջ հայկական որբանոցների յայտնի խնամակալ Լէօպօլդ Ֆավր և Վանի ծանօթ միսիօնէր Դր. Րէյնօլց դասախօսեցին Հայաստանում հիմնած որբանոցների և թիւրքահայ ժողովրդի ծանր վիճակի մասին։ Դասախօսներից առաջինը մանաւանդ մեծ գովեստով շեշտեց հայ ժողովրդի քաղաքակրթական ձգտումները, բարոյական հակումներն ու անսովոր տոկունութիւնը՝ քաղաքական կռուի ասպարէզում։

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԱԶԴ

ՏԷՐՐՈՐ

Վասպուրականի Կ. Կոմիտէի որոշմամբ տէրորի ենթարկւեցաւ Բզնունեաց գաւառի (Ալճավազ) Առէն գիւղացի Մ է լ ի ք Յ ա կ ո բ Ք ա ն ք ա ն ե ա ն, իբրև լրտես հիւսէյն փաշայի քով, իբրև մատնիչ մեր երեք ընկերներու, որոնք Հիւսէյին փաշայի հրամանով և քիւրդերու ձեռքով սպանւեցան չարաչար տանջանքներով։

Հ. Յ. Դ.
ՎԱՍՊ. ԿԵՆՏ. ԿՈՄԻՏԷ

ՎԱՆԻ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Վասպուրականի Կեդրոնական Կոմիտէն կը հրահանգէ՝

1) Ոչ ոք չհամարձակւի զբաղիլ դաւաճանութեամբ, մատնութեամբ և լրտեսութեամբ. թող զգուշանան ժամանակի ընթացքում նոյն գործերով կասկածելի երևցածները։

2) Ոչ ոք չհամարձակւի այսուհետև գիշերային յարաբերութիւններ ունենալ թիւրք պաշտօնեաներու հետ. հակառակ պարագային անոնք պիտի նկատուին իբր կասկածելի անձեր։

3) Ոչ ոք չհամարձակւի այսուհետև լոկ սին հետաքրքրութեան կամ կասկածելի նպատակներու համար՝ տեղեկութիւններ հաւաքել յեղափոխական անձնաւորութիւններու և գործերու մասին։

4) Ոչ ոք չհամարձակւի կազմակերպութեան կնիքը կեղծել ու կնքած նամակներով սպառնալիքներ կարդալ կամ պահանջներ ընել։

5) Ոչ ոք չհամարձակւի անհատական հաշիւներով տէրորներ կատարել՝ կարծելով թէ կազմակերպութեան կատարած տէրորներու շարքին կրնան անցնել և թող իւրաքանչիւր հայ զգուշանայ թիւրքերէն՝ մի գուցէ գաղտնի սպանութիւններ պատահին և յետոյ մեր կազմակերպութեան վերագրւին։

6) Ոչ ոք չհամարձակւի գաղտնի կամ յայտնի ոևէ զէնք և փամփուշտ ծախել թիւրքի կամ քիւրտի։

7) Ոչ ոք չհամարձակւի այսուհետև (մեծ առևտրական լինի, թէ փոքր) հասարակութեան դրամները գաղելով կեղծ սնանկութիւն հրատարակել։

8) Ոչ ոք չհամարձակւի վաշխառութեամբ գիւղացիներու կամ առհասարակ աղքատ ժողովրդի հողեր, կալուածներ կամ գոյքեր բռնի գրաւել՝ թշուառութեան մատնելով անոնք։

9) Ոչ ոք չհամարձակւի կեղծ դրամ կտրել և ցրւել հասարակութեան մէջ մանաւանդ կազմակերպութեան անունով։

Այս հրահանգները չլսող ու չկատարողները թող վըստահ լինին, որ իրենց ոչ մէկ քայլը չպիտի վրիպի կազմակերպութեան ուշադրութենէն և թող հաւատացած լինին, որ կազմակերպութիւնը իրենց դէմ ձեռք պիտի առնէ ամենակտրուկ միջոցներ և գործադրէ ամենախիստ պատիժներ, կանգ չառնելով նաև մահուան պատժի առաջ։

1906, մարտ

Հ. Յ. Դ.
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԿԵԴ. ԿՈՄԻՏԷ

ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆ

Արեւմտեան Բիւրօն ստացած է՝

Գ ե ր մ ա ն ի ա.—Բերլինի հայ ուսանող. երեկոյթի հասոյթից մնացորդ՝ (140 մարկ) 172 ֆր.։

Ռ ու մ ա ն ի ա—Գրախլայի ենթակոմիտէէն 653. ֆրանկ 45, սան. հաւաքուած հետեւեալ կերպով՝ Սրճարանի հասոյթ 444. 45, Նուէր Իէօնիստ 20,՝ հետեւեալ խմբերէն. Առիւծ 30, Տարօն 16, Կարմիր Լեռ 24, Հարաւային 18, Ագիւլ 12, Անդրանիկ 30, Գուրգէն 24, Արարատ 24, Արձագանք 12։

Ընդ. գումար 825 ֆր. 45 սան.։

Պուլկարեան Կեդր. Կոմիտէն՝

ՖԻԼԻՊԷԻ ԿՈՄԻՏԷՆ՝ Ներկայացման հասոյթ 301. 85 լէվ. Օր. կարմիր խաչի բ) տասնեակ 13. 50, գ) տասնեակ 12. 50, ա) տասնեակ

18, Սօսի-Այծեմ խ. 17. 50, եւս 15, Արամեան խ. 62, Արեւելեան խ. 20, Տարօն խ. 23, եւս 24, եւս 29, Բաբկէն-Սիւնի խ. 51, Վասպուրական խ. 26, Վրէժ խ. բ) տասնեակ 38, Վարդգէս խ. 19. 50, Ապէլ Թաթուլ խ. 40, Տիկն. Շամէ խ. 111. 50, Վազգէն խ, 28, եւս 29, Քր. Միքայէլեան խ. 9, Թ. Բազարճըրի Քէղայի խ. 9, 50, Պնակի հասոյթ 15. 20, Սգահանդէսի հասոյթ 45. 65, Ս. Թորոսէն ի նպաստ բանտարկեալներու տրւած երեկոյթի հասոյթ 309. 30: Գումար 1268 լ.:

Նոյն կոմիտէի հանգանակութենէն՝ Խանուք 20 ֆրանք, Սուր-Թուր 20, թիւ 16505՝ 20, թիւ 16512՝ 10, թիւ 16347՝ 125, թիւ 16352՝ 200, թիւ 16354՝ 50, թիւ 16357՝ 150, Խաչիկ 100, թիւ 16363՝ 200, թիւ 16492՝ 10, լէվ, Մկրտս՝ 10 թիւ 16493՝ 10, թիւ 16485՝ 4, 16496 5, Կայծակ 2, թիւ 16498՝ 10, թիւ 16499՝ 10, Խաչ 2, թիւ 16501՝ 2, Ղարիպ 5, Կանէմեան 3, թիւ 16504՝ 10, թիւ 16506 2, թիւ 16507՝ 5, Ջամբ 20, ոմն 10, Դարանալի 30, թիւ 16511՝ 30, թիւ 16513՝ 15, թիւ 16346՝ 150, թիւ 16348՝ 40, թիւ 16349՝ 70, թիւ 16350՝ 60, թիւ 16351՝ 10, թիւ 16355՝ 100, թիւ 16356՝ 40, թիւ 16359՝ 5, թիւ 16360՝ 5, Ե. Մ. Բ. 100, Արծիւ 5, թիւ 11218՝ 5, թիւ 11219 30, Սեւ հողեր 16, թիւ 16353՝ 70, Սողոմոն 20, Մարտ. Հինդեան 5, Հեքում-Դակիկ խ. 107. 20, Հրայր խ. 44, Յ. Դ. 5, Դ. Կ. 2, Կ. Յարութիւնեան 5, Տիկ. Ե. Յարութիւնեան 5, Յ. Պօղոսեան 5, Տիկ. Հ. Յովհաննէսեան 3, Օր. Սէլմէ Յովհաննէսեան 3, Թ. Բազարճըրէն Քէղայի խ. 10, Թ. Հն. Նիկողոսեան 5, Հայ 1, Յար. Աբրահամեան 2, Թ. Հն. Ներսիսեան 10, Կ. Հն. Արթինեան 10, Բօլէովնիկ Նէնով 2, Խ. Յակոբեան 2, Ն. Մելիքեան 3, Դ. Միքայէլեան 2, Պ. եւ Դ. Էկինլեան 2, Պ. Հն. Յարութիւնեան 3, Մ. Գազազեան 2, Յով. Փափազեան 2, Կ. Խաչումեան 4, Պ. Յակոբեան 3, Մ. Հն. Նիկողոսեան 4, Յովհ. Հն. Նիկողոսեան 5, Հայ 2, Նորայր 5, Յ. Ժիրայր 5, ոմն 5 ֆր., Ա. Էկինլեան 3, Պարսիզեան 5, Պօրխովկրաւէն՝ Յ. Մ. Գ. 15, Ազգասէր ոմն 15, Ազգասէր ոմն 5, Անծանօթ 5, Ազգասէր մը 10, Գ. Սենեքերիմեան 7, Ս. Մկրտչեան 2, Յ. Մարտիրոսեան 3, Կ. Պետրոսեան 4, Մ. Կարապետեան 3, Խ. Կարապետեան 5, Մ. Այրուեան 4, Փ. Յովհաննէսեան 6, Փ. Թադէոսեան 5, Ս. Մամասեան 2, Խ. Պետրոսեան 4, Մ. Յովհաննիսեան 2, Ա. Վարդանեան 3. Յ. Առաքելեան 1, Բօլէ Նեսով 1, Պ. Ղազարեան 3, Խ. Յովհաննիսեան 1, Յ. Կարապետեան 4, Մ. Մելիքեան 0. 50, Մ. Մարգարեան 1, Գ. Պետրոսեան 1, Մ. Պաղտ. 2, Կ. Շահինեան 1, Բլեվնաէն՝ Մ. Գէորգեան 2: Գումար 900 ֆր. եւ 1314. 70 լէվ:

ՍՕՖԻԱՅԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷՆ՝ Անդրանիկ խ. 26 լէվ, եւս 22, Սերոբ-Աղբիւր խ. 78, եւս 58, Հրայր խ. 30, Թ. Զարմեան խ. 56, Քրիստափոր խ. 24, տիկին Սօսի խ. 144, Սեպուհ խ. 128, Անդրանիկ խ. 23, Կիրակոս Սինտիկ նուէր 20, Ս. Վարդան նուէր 5: Գումար 614 լէվ:

Նոյն ենթակոմիտէի հանգանակութենէն՝ Ն. Համ. 5, Մ. Քրէս 5, Թ. Ջաք. 2, եղբ. Թագ. 5, եղբ. Գրիգոր 10, Ս. Վարդ 20, Օքս. 5, ոսկերիչ Կէն 10, Մէն Գոչան 5, Ալէար 300, Ա. Գ. 5, Տէսն Թագ. 5, Մանուշակ 10, Գալֆա 5, Սէ Համբ. 20, Մխիթար 10, եղբ. Դանիէլ 10, Յովհան 2, եղբ. Մխիթար 7, եղբ. Պետրոս 10, Ասլան 150, Մ. Սրմաքով 5, Սանտօ 100, Համսի 20, Մէն Հի 60, Մէն Արծ. 20 Սուքեաս 40. 40, Նազար Խուրշ 3, Գալուստ 5, Խլաս 4, Խէ Գրիգոր 2, Խէ Սիմ. 4, Սելաւրեցի 10, Մէնթէ 4, Կէն Խաշ 2, Դիմ. Հի 20, Թոռնի 20, Առաջնաց 20, Մասակ 60. 60: Գումար 1001 լէվ:

ՌՈՒՍՉՈՒՔԻ ԿՈՄԻՏԷՆ՝ հետեւեալ խմբերից՝ Պէտօ 72, Տէռոր 40, Մանուէլեան 40, Բաբկէն-Սիւնի 35, Հրայր 25, Շամէ 29, Թաթուլ Մալկարացի 23. 50, Վրէժ 20, Ռաշօ 16. Շիշբոյի Կայծակ 20, Առիւծ 15, Վառօդ 14: Գումար 349. 50 լէվ:

Ծ ա ն օ թ. Նոյն կոմ.-ի հանգանակութեան մանրամասնութիւնը յաջորդով:

ՎԱՐՆԱՅԻ ԿՈՄԻՏԷՆ՝ հետեւեալ խմբերից Կարմիր խաչի Արամս 296. 40, լէվ, Կարմ. խաչի Սօսէ 27. 40, Կարմիր Խաչի Քրիստափոր 53. 05, Հայրիկ 43, Առիւծ 17, Կուկունեան 28, Յառաջադիմական 28, Վրէժ 24, Հրայր 16, Տարօն 43, Ռշտունեաց 27, Սպաթար 47. 50, Բողոք 22, գումար 672. 35, լէվ:

Նոյն կոմիտէի հանգանակութենէն՝ Օ. Ճ. 20 լէվ, Երկաթ 100, Շաքանակ 50, Վրէժ 100, Յ. Թ. 200, Ծնունդ 30, Մահտեսի 50, Ս. Գ. 40, Սար 50. Արամս 50, Լոյս 100, Վանառական 50, Տակառ 150, եւս 150, Յ. Հ. Ճ. 10, Անաչառ 20, Կայծակ 15, Տ. Իշխան 10, Թըռչուն 20, Գ. Ջ. 80, Հայորդի 30, Նիֆ. Ս. 10. Նահապ 7, Խենդ 10, Լուբեայ 15, Խոտ 5, Հայելի 15, Գ. Յակոբեան 2, Մինաս 2, Օսիկեան 5, Օվիտ 2, Յ. Մերադ 2, Յ. Գէորգեան 10, Գ. Նանեան 2, Մ. Մելքոնեան 10. Կովրիկ 10, Վարդան 1. Միքայէլեան 1, Աբրահամեան 5 Մ. Օհաննէս 2, Մ. Անէմ 5, Գ. Մաքէոսեան 1. 50, Կար-Համիողլու 5, Տօլարեան 4, Պօղոս Պետրոսեան 4, Մ. Կիւմիւշեան 2, Մ. Ծերունեան 5, Պ. Նիկողոսեան 2, Տէիրմէնճի 3, Արշակաւան 5, Յ. Սէիսեան 10, Սահակեան 5, Թ. Մ. Յակոբեան 2, Թադէոս 2, Բեսայ 2, Օ. Բարսեղ 2, Եփրատասարանք 5, Կալպես 3, Թորոս աղայ 2, Կ. Պաղդասար 3. Ս. Ղ. 5, Տ. Անէմ 3, Խ. Ասատուր 5, Ռէս 5, Խ. Ադ. 5, Պօղոս Պ. 3, Մ. Յոն 3, Մ. Յարութիւն 5, Պ. Տ. Յ. 3, Մկրտիչ կառապահ 5, Ապուր 3, Մանուկ Յ. 3, Մաս 3, Կայծակ 5, Ալբուն 5, Մասուկ 2. Կոստի 2, Տավօ 5, Գէորգ չոպան 3, Գ. Ծխավաճառ 5, Կահչո 3, Փառունակ 5, Աւօ աշնի 4, Ռշտունիք 10, Գալուստ կօշկակար 3, Ղ. Առաքելեան 5, Ջուլիչ 4, Մ. Վարդանեան 3. Տ. Վ. Ք. 3, Ամիրխանեան 3, Ա. Ամիր 5, Զաքար 5, Առօ Փ. 5, Խաչօ Վ. 5, Ապուխտ ծախ. 5, Ծաղիկ 5, Շահին 5, Ծաղիկեան 5, Մ. Գէորգ 5, Գ. Սահակ 5, Տ. Գէորգեան 5, Մ. Քահանայ 5, Ռ. Կ. 5, Սալոն 5, Խիզան 5, Գ. Սարգիս 10, Պ. Օսկան 2, Ֆօնօկրաֆ 3, Նառախուղ 5, Յ. Պ. 5, Ն. Խաչիկեան 3, Ա. Դ. 5, Աքանաս Տ. 2. Ք. Գրիգորեան 5, Ա. Ժիրայր 2. Լազ. 3, Պ. խ. 2, Ս. Մարգար 2, Կ. Մ. 2, Օ. Մ. 2, Յ. Ա. . 5, Յուսին 2, Մխալ 5, Բրուդ 2, Մ. Ավետս 2, Մ. Վարդան 2, Ա. Մարգար 3, Մ. Կարեր 2, Թիւֆէնկճեան 5, Տ. Խոհարար 5, Ս. Բարսեղեան 3, Տ. Նէմէսեան 2, Անէմեան 2, Գարագաշ 2, Ղայրէթ 2, Հն. կօշկակար 3, Գ. Ադամեան 2, Պ. Ղ. 2, Ն. Պէյլիկճեան 3, Մ. Պապիկեան 2, Օ. Ա. 10, Կ. Քէշքէկ 3, Շէֆգի 3, Ե. Լեւօնեան 5, Ամբիկ 5, Յակոբ ծխավաճառ 5, Էսքինի Գասպար 2, Մ. Ղազարեան 2, Ե. Պօզանի 2, Մ. Պօղոսեան 2, Մ. Մուրադեան 2, Անձնէր 3, Թ. Սարգիսեան 2, Թաշօ 2, Ղօզանեան 2, Զանազաններէ 26. 60, Փալապէխ 5, Ավան 5: Գումար 1900 լ.:

ՊՈՒՐԿԱԶԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷՆ՝ հետեւեալ խմբերից Սասուն 72, Արամս 57, Արտօֆ 34, Եփրատ 54, Քուվի Քարեր 26, Աղթամար 12, Օժանդակ 55. 90: Գումար 310. 90 լէվ:

ՍԼԻՎԷՆԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷՆ՝ Նուէր Ա. Սերոբեանէ 20. 20, լէվ հետեւեալ խմբերից Սբրալճա կայարանի Սերոբ-Աղբիւր 40. 20, եւս 30, եւս 40, եւս 31, եւս 31, Արագօ 20. 20, եւս 20. 20, Ռասնէ Մահլէի գանձանակէն 22, Ազատ 70. 70, եւս 23. 50, Դրախտ 40, եւս 40, եւս 40. 40, Ազատ 32, Գարնապաթ կայարանի Հրայր 22, եւս 24. 50, Սկօպէլօվօ կայարանի Արծիւ 20. 20, Գարաբունար կայարանի Պէտօ 33, եւս 20. 30, եւս 40, եւս 40, Սերոբ 15, Քէրմէն-ի կայարանի Անդրանիկ 20. եւս 20, եւս 17, Սլիվէն քաղաքի Անդրանիկ 21. 60, եւս 28. 60, Շանթ 5 10, Քրիստափոր 19, եւս 24. 60, Սիրէմնեան 14. 30 եւս 13. 50, Վասպուրական 24. 45, եւս 24. 85, Եամպօլ քաղաքի Կայծակ 57, Անդրանիկ ընթերցարանի հասոյթ 33. 65, լէվ: Գումար 1040. 05 լէվ:

ՊՐԱՒԼԱՅԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷՆ՝ Որհարանի հասոյթ 500 լէվ, Տարօն խ. 42, նուէր Սիփան լեռ 5, Տիրան 4, Դանուբ 20, Վարդ 5, Հայդուկ 5, Վիժ 5, Յօլակ 3, Խան 5, Արդար 5, Պարոյր 5, Թափառական 15, Էբրանժէ 5, Ջաղացք 10, Արածանի 10, Հողագործ 20, Նորեկ 5, Արիւնոտ դանակ 5, Ռաֆֆի 2: Գումար 676 ֆրանք,

ՊՈՒՔՐԷՇԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷՆ՝ Հետեւեալ խմբերից Անդրանիկ 54 լէվ Վազգէն 39, Սէրէմնեան 69, Ֆէդայի 42, Կայծ 42, Զէյթուն 40, Նէվրուզ 48, Տիկին Շամէ 48, Տիկին Արամս 42: Գումար 424 ֆրանք:

ԴԱՆՈՒԲ ԿՈՄԻՏԷՆ՝ Արարատ ընթերց. հասոյթ 240. 10 ֆրանք Տիկն. Կարմիր Խաչի գանձանակէն 134, գ. Արամ 33, գ. Գայլ 21, գ. Արարատ 42, Ֆէդաի 30, Զինասէր 19, Կարէն 21, Սերոբ-Աղբիւր 24, Նոր դար 45, Նեմրութ 22, Վարազ 52, Տարօն 33, Հազուլ 23, Տիկին Արամս 40, Նոր դար խմբի անդամ Պարքեւի ամսավճար 36, Նեմրութ խ.-ի անդամ Դրդունէն 5, Հազուլ խմբի անդ. Ակներէն 3, Նոր դար խմբի անդամ Դաբուրանէ նուէր 5, Ա. Մանուկեանէ նուէր 15. 35, ծախւած պատկերի արժէք 22: Գումար 862. 45 ֆրանք:

Ընդհանուր գումար 2862. 45 ֆր. եւ 8470 լէվ եւ 50 սանտ.:

Մամուլի տակ են

Հ. Յ. Դ. Հրատարակութիւն՝

1. ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆԻ ՄՏՔԵՐ

Քր. Միքայէլեանի։

2. ՍԱՍՈՒՆ-ՄՈՒՇԻ ԿՌԻՒՆԵՐԸ 1904-*ին*

Հրայրի և Վահանի պատկերով և Սասունի քարտէզով։

Առաջինի գինը . . . . 1 *ֆր.* —
Երկրորդինը . . . . — 50 *սանտ.*